

ԷՍՍԱՆՈՒԵԼ ԶԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

ԶԱՐԴԱՐԱԿԱՆՔԻ ԸՆԹԱՑ

(Ժողովրդական ըմբերցանության համար)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿ
ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԻՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

S. S. ՄԿՐՏԻՉ Ա.

ՄՐԲԱՋՆԱԳՈՒՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ՀՐԱՄԱՆՈՎ

ՉԱՐՉԱՐԱՆՔԻ

ԾԱԲԱԹ

(Ժողովրդական լնդերցանության համար)



Գրեց

ԷՍՍԱՆՈՒԵԼ ԶԱՀ. ՆԱԶԱՐԵԱՆՑ



Թիֆլիս
Տպարան Մ. Շարաճէ
1894

Այլ մի ի հարուածս, և զիտէ համբերել ցաւոց. - Նա զմելու
մեր բառնայ եւ վասն մեր չարշարի:

Եսայի Մարգարէ.

Ծնորհազարդ Տ. Էմմանուէլ քահանայ Նազարեանց

ՊԱՏՈՒԱԿԱՆ ՀԱՅՐ,

Վեհափառ Հայրիկի հրամանաւ Զեր հայրութեան կը վերադարձնեմ ահա Զեր «Չարչարանքի շաբաթը» անուն երկասիրութիւնը, զոր ամբողջովին կարդաց Վեհ. Հայրիկն եւ շատ զոհ մնաց նորա բովանդակութենէն, լեզուի մաքրութենէն եւ ուղղութենէն: Ստորագրած եւ հրամայած է, որ տպագրութեան տար: Յարմար կը դատէ, որ յետ տպագրութեան՝ Չարչարանց վերջին շաբթուն հրապարակ հանէք զայն:

Հասուցանելով զայս յարգելի Հօրդ, մնամ Զեզ միշտ
խոնարի որդի Խորէն Խրիմնեան:

1893 դեկտ. 22

Ի Ս. Էջմիածին

Ե Ր Կ ՈՒ Կ Ա Ր Ծ Ի Ջ

«Յիսուս Քրիստոսի մկրտութեան» մասին

Ա

ԱՐԺԱՆԱՊԱՏԻՒ ԷՍՍԱՆՈՒԵԼ

Առրնձայ քահանայ.

Ծնորհաւորելով Զեր քահանայական պատուական աստիճանն եւ քարի վայելումն մաղթելով՝ յայտնեմ զոհունակութիւնս որպէս նուիրանացդ համար, նոյնակն եւ առավել եւս «Յիսուս Քրիստոսի Մկրտութիւնը» պարզ ժողովրդի լեզուով եւ գեղեցիկ բացատրութեամբ նկարագրութեանդ համար: Շշմարտութեամբ ասեմ՝ շատ հաւանեցի եւ քանից ախորժանօր կարդացի: Կը ցանկանայի, որ մեր բոլոր դպրոցական ուսանողներն եւ ամէն հայ մարդ կարդար եւ լաւ ծանօթանար Աւետարանին:

Զեզ քարեկամ

Մեսրովք արքեպիսկոպոս

21 մայիսի 1893

Շամախի

Բ

Մ Ա Տ Ե Ն Ա Խ Օ Ս ՈՒ Թ Ի Ի Ն ՅԻՍՈՒԻ ՔԻՒՍՈՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ (Ժողովրդական ընթերցանութեան համար) ՍԱՐԿԱԽԱԳ Յ. ՆԱԶԱՐԵԱՆՑ

Ժողովրդի հետ պէտք է խօսել ժողովրդի լեզուով: Սա այն միակ ճանապարհն է, որով հնար է ժողովրդի մեծամասնութիւնը, հազարզիխեան ամբոխը մասնակից անել գիտութեան և բարոյախօսութեան այն մեծ բարիքներին, որ զարգացման տարբեր աստիճանների չնորհիւ վայելում է միայն փոքրամասնութիւնը, մինչդեռ նաև սեփականութիւն է, անհրաժեշտ պիտոյք է ժողովրդի մարդուն, բուն ժողովրդին: Այսօր դժուարամատոյց գիտութիւններն անգամ՝ բնագիտութիւն, աստղաբաշխութիւն, հոգեբանութիւն, ժողովրդականացնում են գիտնական մարդիկ (Տենդալ, Հելմհոլց, Ֆլամմարիոն, Մանտեկացցա). բայց որքան աւելի մեծ կարիք կայ բարոյախօսութեան բարձրագոյն ուսմունքները հանրութեանը մասնակից անելու: Զէ՞ որ դա այն զօրեղ լծակներից մինն է, որոնք պիտի բարձրացնեն լքեալի սիրտը, վերականգնեն նորա հոգւոյ արիութիւնը, ամրապնդեն նորա՝ իշնորհս կեղծ յառաջադիմութեան քայլայման դիմող բարոյական կապերը, վերականգնեն նորա սրբութիւնները, զօրացնեն նորա հաւատար՝ այն հաւատը, առանց որոյ չկայ փրկութիւն, հաւատը դեպի բարին, ազնիւը, վսեմը, առաքինին: Տասնեւիններորդ դարը շատ առիթ ունի գանգատելու, որ հաւատի ամուր պարիսպները ճեղքոտուել են և վտանգ են սպառնում փուլ գալու:

Մեր առջև դրուած է մի փոքր գրքոյկ, որ ժողովրդին յատուկ պարզ ու անշուք բարբառով ուղղակի ժողովրդի սրտին է դիմում՝ բացատրելով նորան քրիստոնէութեան ամենասիրուն և վեհագոյն խորհրդները:

Իից մէկը՝ այն, որով Աստուածամարդը իւր առաջին քայլը դրեց իւր գործունէութեան ասպարէզի վրայով, այն, որով մարդացեալ Աստուածը հէնց առաջին քայլում խոնարհութեան և համեստութեան՝ մարդկային արժանեաց երկու ամենամեծ հիմնաքարերի օրինակը տուաւ՝ խոնարհելով իւր գլուխը հողեղին մարդոյ առջև, որ նա վրան ջուր ածէ ու մկրտէ: Այդ համեստութիւնն ու խոնարհութիւնը նորա ամբողջ էութիւնն էր, այդ հեղութեան օրինակով էլ կնքեց նա իւր վերջին օրերը՝ իւր աշակերտների ոտները լուանալով:

Աւետարանի գոհարները ժողովրդի սրտի և ուղեղի մէջ հալեցնելու այդ փորձը նոր չէ մեր մէջ. դորա ամենամեծ ջատագով հայերիս Հայրիկն է, որ միշտ և հանապազ այդ արել է կենդանի խօսքով և գրով: Երջանիկ միտք է յղացել Յովհաննէս սարկաւագը այդ լուսաւոր շաւիղով ընթանալ: Ամենագողակիկ, բանաստեղծական պարզ բարբառով նա բաց է անում բանուորի, խանութպանի, արհեստաւորի, մշակի, բեռնակրի առջև Մեծ Գրքի մի սիրուն երեսը և, անոյշ խօսքերով պատմելով նորան այդ սրբազն անցքի ֆաբուլան, նա վերացական չոր ու ցամաք ձեւի փոխարէն բանեցնում է գործնականիրականը: Նա մի փոքրիկ գաղափար է տալիս պատմական այդ շրջանի հրէական կեանքի մասին, աշխարհագրական և բնագիտական դիտողութիւններ է անում Յորդանան գետի և Մեռեալ ծովի նկատմամբ, կենդանի ներկայացնում է մեր առջև Յովհաննէս Մկրտչին և նորա կոչումը:

Այնուհետև նկարագրելով բուն անցքը՝ նա բացատրում է և բուն խորհուրդը, խոնարհութեան գաղափարը:

Ահա այսպիսի մի գրքոյկի պէտք ունի ամէն մի հայ քրիստոնեայ, որ տակաւին համոզուած է, թէ հաւատը այն ամուր հիմնաքարն է, որի վրայ շինւում են բարի ու առաքինի գործերի մեծ ու փոքր չէնքերը:

Յ. Լ.

ԷՍ ԳՐՈՒԱԾՔԻՄ ԿԱՐԴԱՑՈՂՆԵՐԻՆ

Սիրելի՝ կարդացող

«Յիսուս Քրիստոսի Մկրտութիւնը» անունով մի գրքոյք տպեցի. չգիտեմ՝ լաւը ի՞մ գրածն էր, թէ՞ դու էիր, որ կարճ ժամանակում հազարաւորը ծախուեց: Ամէն տեղ, ուր որ գնաց իմ փոքրիկ գրուածքը, ամէն տեղ, ուր, որ նա քարոզեց մեր Տիրոջ մկրտութեան խորհուրդը, գրկաբաց ընդունուեց: Մի՞թէ, յիրաւի, նա էնքան լաւն էր: Չեմ կարծում: Ինձ թւում է, թէ գրքոյկիս կարդացողները, գովասանքներ գրելով նրա մասին, ոչ թէ նրա իսկական արժանաւորութիւնն են գին գրել, այլ գրողին են ուզեցել միրտ տալ, խրախուսել, որ աւելի լաւերը գրի: Ուղիղ է, թէ սխալ իմ կարծիքը՝ չգիտեմ: Բայց ես էնքան ոգեսորուեցայ, որ սկսեցի մի նոր բան էլ գրել:

Կարելի է դու ուզում ես իմանալ, թէ ինչ մտածեցի ես, որ էս անգամ Զարչարանքի շաբաթն ընտրեցի: Ասեմ քեզ:

Ամենքիս յայտնի է, որ մենք՝ հոգեսորականներս, ժողովրդին եկեղեցում տեսնում ենք միայն մեծ պասին: Ուրիշ օրեր, մանաւանդ լուր օրերը, արձակման «Հայր մերն»-ն ասելուց յետոյ ամաչում էլ ենք շուր գալ և «Օրհնեալք եղերուք»-ն ասել, քանի որ գիտենք՝ ետեներս մարդ չկայ կանգնած: Միայն Մեծ պասին է, որ հայ մարդը, յիշելով, որ ինքը քրիստոնեայ է, օրերը՝ ապաշխարութեան օրեր, յիշելով, որ էս փուչ աշխարհում մեղք ու վարձք կայ, էն երանական աշխարհում քննութիւն ու դատաստան կայ, տնից դուրս գնալիս սատանին թքում է, Աստծու անունը տալիս և բռնում է եկեղեցու ճանապարհը: Մտնում է Աստծու տաճարը: Ա՛խ, ինչպէ՞ս խամացել է. չգիտէ՝ որտեղ կանգնի, ինչպէս կանգնի, ինչ անի ու ինչ չանի, որ չորս կողմի կանգնողներից չամաչի: Լաւ միտքը չէ գալիս, թէ երբ պէտք է ծունը դնի, երբ՝ երեսը խաչակնքի: Երկու օրից յետոյ էլ ամէն բանում վարժւում է և սկսում ուշքը դարձնել եկեղեցում կարդացուող ու երգուող բաների վրայ: Մի խօսքով՝ էլի «Հին հաւատը» միտքն է գալիս, ու ամէն բան կարգի ընկնում:

Եւ ի՞նչ քրիստոնեայ կընի էն հայն, որ մեծ պասին էլ եկեղեցի չգնայ: Կարելի՞ է միթէ, որ քրիստոնեայ մարդը տարին գոնէ մի

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ

11

քանի շաբաթ, մի քանի օր չմոռանայ էս անցաւոր, խաբուսիկ աշխարհը ու մի քիչ չմտածի էն անանց, իսկական աշխարհի մասին, որ յաւիտենական ժամանակներից ստեղծող Աստուածը պատրաստել է մարդու համար: Առաքեալն ասում է. «Եթէ յոյսներս միայն էս հողեղէն աշխարհի վրայ ունենք դրած և ոչ թէ էս հողեղէն աշխարհի վրայ, անասուններից էլ վատթար ողորմելի ենք»: Եւ ծշմարիտ, մարդս ստեղծուած է ոչ թէ էս աշխարհը վայելելու, այլ՝ Աստծուն վայելելու համար: Ինչպէս իր բնիկ երկրից դուրս գնացած մարդը պանդուխտ է ասում, էնպես էլ մենք ամէնքս էս աշխարհում պանդուխտ ենք, որովհետև ամէնքիս բնիկ երկիրը՝ հայրենիքը, երկինքն է, քանի որ ամենքիս Հայրն էլ երկնքումն է:

Այո՛, գոնէ տարին մի քանի օր եկեղեցին մոռացնել է տալիս մեզ էս աշխարհը, որի վրայ մենք պանդիխտացած ենք, և մեր հոգին թևաւորում է դէպի մեր հայրենիքը՝ դէպի երկինքն ու երկնքի Ստեղծողը: Ապրե՛ն մեր անմահ սուրբ հայրապետները, օրհնուի՛ նրանց սուրբ յիշատակը, որ էսպէս սիրուն զարդարել են եկեղեցին հոգեսոր երգերով ու հոգեսորող արարողութիւններով:

Մեծ պասի ապաշխարութեան օրերում համարեայ ամէն հայ քրիստոնեայ պարտականութիւն է համարում եկեղեցի գնալ, ժամ-պատարագ տեսնել, քարոզ լսել, մոլար ճանապարհից յետ գալ, մեղքերը խոստովանել և իր Փրկիչ Յիսուս Քրիստոսի կենդանի ու կենդանարար Մարմինը, Արիւնը, Հոգին ու Աստուածութիւնը իր մէջ ընդունելով՝ ճաշակուել, էս աշխարհի մեղքի փուշը կոտրել՝ էն աշխարհի վարձքի պսակը ստանալու համար:

Շատ բան է լսում մեր ժողովուրդը մեծ պասի քարոզներից. խօսք չկայ, բոլորն էլ լաւ, խելացի ու հոգեշահ մտքեր: Բայց մի շատ հարկաւոր բան համարեա ամէն քարոզչի կողմից մոռացութեան է տւուած: Ի՞նչն է էլ շատ հարկաւոր բանը. մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրաւոր կեանքի վերջին օրերը՝ նրա չարչարանքը, դատապարտութիւնը, մահը և յարութիւնը. մի խօսքով՝ Զարչարանքի շաբաթը: Էն, ինչին որ մենք մեծ պաս

ենք ասում, եօթը շաբաթ կամ յիսուն օր չէ, ինչպէս սովոր ենք ասել. դրանից պակաս է: Մեծ պասը խսկապէս քառասուն օրուայ պաս է. էղ պատճառով էլ մեր եկեղեցական գրքերում նա Քառասնորդական պահք է ասւում. Մեծ պասն սկսում է Բուն բարեկենդանից յետոյ առաջին չորեքշաբթին և, Ծաղկազարդ կիրակի օրը հասնելով քառասուներորդ օրին, վերջանում է: Էղ քառասուն օրն է միայն ապաշխարութեան օր. նրանից յետոյ է լ ապաշխարութեան ժամերգութիւն չէ լինում, ո. սեղանի վարագոյրն էլ բացում է ու բաց մնում: Վերջին՝ եօթերորդ շաբաթը էլ մեծ պասին չէ վերաբերում. այլ Յիսուս Քրիստոսի գլխովն անց կացած՝ Նրա տնօրինական օրերն են, որոնց սովորաբար ասում ենք Զարչարանքի շաբաթ: Էղ շաբաթապասն էլ սահմանուած է ի պատիւ Յիսուսի տնօրինական օրերի. և թէ՛ նաւակատիքը ու թէ՛ ճրագալոյցը յատուկ էղ շաբաթ օրուայ համար են սահմանուած: Մի խօսքով՝ ինչպէս որ Զատիկը ապաշխարութեան օրերի զարդն է, էնպես էլ Զարչարանքի շաբաթը Մեծ պասի թագն ու պսակն է:

Ճշմարիտ է, Զարչարանքի շաբաթուայ մասին դու շատ բան հակացած կը լինես ո. Աւետարանի մարգարտաշար խօսքերից, շարականի ոսկետող երգերից և եկեղեցու հոգեպարար արարողութիւններից. բայց էղ բոլոր լսածներդ ու միւս տեսածներդ դժուար թէ քեզ համար էնքան պարզ ըլնեն, որ կարիք չունենաս աւելի՛ն լսելու:

Զարչարանքի շաբաթը մի գեղեցիկ պատկեր է, բայց վրան քող գցած: Ամէն մարդ չէ տեսնում նրա գեղեցկութիւնը: Պէտք է բարձրացնել վրայի քօղը, պէտք է լոյս սփոել վրան, որ պատկերը իր բոլոր մասերով դրոշմուի ամէն նայողի սրտումը, տպուի ամէն տեսնողի հոգումը: Յոյս ունեմ, որ էս փոքրիկ գրուածքը էղ կողմից մի թեթև ծառայութիւն կանի քեզ:

Է. ք. Նազարեանց

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԾԸ

Առաջուց գիտենալու բան

Զատիկ է: Հրեայի համար՝ ամօթ, թուք ու մուր. քրիստոնեայի համար՝ սէր, խնդում ու ցնծում: Բայց էժան չէ նստել մեզ՝ քրիստոնեաներիս, էղ ուրախութիւնը, որ էսօր լցուած է մեր սիրտն ու հոգին, որ էսօր խաղում է մեր երեսներին: Դրա համար արիւն է թափուել, ՅՅ տարուայ կեանք է մատաղ էլել: Բայց ի՞նչ արիւն, ի՞նչ կեանք: Սովորական մարդ, հասարակ մահկանացու չէ, որ թափել է մեզ համար իր արիւնը և զոհել է իր կեանքը: Թագաւոր է մեզ համար մեռնողը. թագաւոր ոչ թէ մի երկրի, այլ բոլոր աշխարհի. ծովերի ու ցամաքների: Թագաւոր թագաւորների՛. Երկնաւո՛ր, անմա՛հ թագաւոր է մեզ համար մեռնողը: Աստուա՛ծ, մարդացած Աստուածն է մեր փոխանակ մեռնողը: Ահա թէ ինչ գնով է ձեռք բերուած մեր էսօրուայ ուրախութիւնը: Բայց թէ ինչո՞ւ մեռաւ, ինչպէ՞ս մեռաւ նա, էղ պետք է գիտենայ ամէն մարդ, որ Նրա անունով քրիստոնեայ է կոչւում, պէտք է գիտենայ ամէն մարդ, որի գլխումը կայ խելք, և խելքումը՝ գատողութիւն:

Ամէնքս գիտենք, որ էս օրերում Քրիստոս յարութիւն է առել, այսինքն՝ մեռած տեղից կենդանացել, դուրս է եկել գերեզմանից: Իսկ գերեզմանից առաջ նա խաչի վրայ էր և խաչից առաջ՝ հեթանոս զինուորների ձեռքին: Բայց էս էլ պէտք է գիտենանք, որ Քրիստոս չարչարուեց էն մեղքերի համար, որ ինքը չէր արել. խաչուեց էն խաչափայտի վրայ, որ իր պէս անմեղների համար չէր պատրաստուած, թաղուեց էն գերեզմանում, որ իր համար չէր փորուած:

«Հապա ո՞ւմ մեղքերի համար մեռաւ նա», կը հարցնէք: Նա մեռաւ մե՛ր մեղքերի համար: Մեր ո՞ր մեղքերի համար: Մեր է՞ն

մեղքերի համար, որ մերն են ին պատճառով, որ թէպէտ մենք ինքներս չենք արել, բայց որովհետև արել են մեր պապերը, մեր նախնիքը, առաջին մարդիկ՝ Աղամն ու Եւան, Նշանակում է՝ մենք ենք արել: Ինչպէ՞ս թէ՝ ուրիշների արած մեղքը մեր մեղքն է: Ահա էսպէս. թէպէտ մեր նախնիքն են արել, և ոչ թէ՝ մենք, բայց որովհետև մեղքը անելով՝ նրանք անմեղ, անարատ վիճակից մեղանչական, արատաւոր դարձան, էղ պատճառով նրանց որդիքն ու թոռներն էլ ծնուեցան էլի ին ախտով վարակուած, այսինքն՝ դարձան ընդունակ նոյնպէս մեղք գործելու: Եւ էղպէս, մեղքը դառնալով՝ նրանց յետնորդների ժառանգութիւնը, ամէնքս էլ դարձանք մեղանչական: Բայց ի՞նչ մեղք էին գործել մեր նախամայրն ու նախահայրը: Անհնազանդութիւն: Անհնազանդութիւն՝ ոչ թէ մարդու հրամանին, այլ՝ Աստծու հրամանին: Անհնազանդութիւն՝ ոչ թէ մի ծանր հրաման կատարելու մէջ՝ ոչ թէ սարեր շուռ տալու և ծովեր ցամաքեցնելու մէջ, այլ՝ արգելուածը չանելու: «Էս ամբողջ դրախտի, էս անմահական տեղի բոլոր ծառերն ու իրանց աննման պտուղները ձեզ փեշքաշ, ձեզ անուշ. կերէք, ի՞նչքան կամենաք, ձեզ հալալ. ձեզ համար են տնկել իմ աստուածային ձեռքերը: Միայն թէ, ինձ կը սիրէք, էս մէկ ծառի պտղին ձեռք չտաք, ինպէս համարեցէք, թէ էս ծառն էստեղ չկայ»: Անհնազանդութիւն՝ էս ամենաթեթև ու ամենաքաղցր հրամանի դէմ: Մարդ ու կին ոտքի տակ տուին իրանց Ստեղծողի հրամանը, արգելուած պտղի հետ տեսան իրանց անհնազանդութեան դառը պտղի համը և դուրս վռնդուեցան դրախտից՝ ին անմահական տեղից: Էն օրուանից մեղքը բուն դրեց մարդուս սրտումը: Առաջին ծնողներից ով աշխարհք էկաւ, նրանց մեղքի մէջը խրուեց: Գլորուեց էղպէս մօտ հինգ հազար տարի: Եւ հինգ հազար տարուայ մէջ ամէն ծնուող Աղամ ու Եւայի մեղքի մէջ ծնուեց: Բայց դա մէկ վերջ

պէտք է ունենա՞ր, թէ չէ: Աստուած աշխարհն ու մարդուն նրա համար չստեղծեց, որ ամէնքն էլ ծնուեն ին մեղքի մէջ, որ իրանք չեն արել, ու մեռնեն էնպիսի մահով, որ յաւիտենական պէտք է ըլնէր: Մի՛ մարդով մեղքը մտաւ աշխարհ. մի մարդով էլ պէտք է վերանար աշխարհից: Առաջին Աղամը բերե՛ց էղ պատիժը մարդկային ազգի գլխին. երկրորդ Աղամը՝ Քրիստոս, ազատե՛ց նրան էղ պատժից: Քրիստոս իր մահովը ոտքի տակ տուեց առաջին մահը. քեզ, ինձ և մեզ պէս բոլոր մարդկանց ազատեց Աղամեւայի մեղքից, նրանց հաշտեցրեց իրանց Ստեղծողի հետ: Բայց ո՞վ հասկացաւ նրա արած լաւութիւնը: Ո՛չ ոք: Գոնէ ում մօտ էկաւ, ումը ուզեց հասկացնել, նրանք չհասկացան: Մենք պէտք է գիտենանք, որ Աստծու ընտրած ժողովուրդը հայն ու վրացին չէր, ոուսն ու ֆուանցուզը չէր, թուրքն ու պարսիկը չէր: Աստծու ընտրած ու աչքի լսի պէս սիրած ազգը հրէաներն էին՝ Աբրահամի, իսահակի ու Յակոբի սերունդներն էին:



ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍ

Յիւրան եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան
Յովհ. Ա

Ամբողջ երեք տարի, դեռ մի քիչ էլ աւելի, Յիսուս Քրիստոս քարոզում էր Հրէաներին: Նազարէթ քաղաքը, որտեղ նա անց էր կացրել Իր մանկութեան ու ջահելութեան օրերը, կասկածոտ աչքով էր նայում Նրա վրայ. չէր հաւատում, որ Քրիստոս Աստծու Որդին է, որ նա Աստուած է: Ինքը Քրիստոս էր ասում. «Մարգարէն իր երկրումը պատիւ չունի»: Իրանից առաջ էկած 16 մարգարէներն էլ, իր ասածի պէս, պատիւ չունեցան իրանց երկրումը: Էդ պատճառով մկրտութիւնից յետոյ նա թողեց նազարէթը, ուրիշ տեղ հեռացաւ:

Հրէաների երկրում հիւսիսից դէպի հարաւ ձգուած է մի սիրուն լիճ, որին ասում են Գեննեսարէթայ լիճ կամ Տիբերական ծով: Եղ ծովի ուղիղ հիւսիսային ափում շինուած էր մի հոյակապ ու գեղեցկանիստ քաղաք՝ Կափառնայում անունով: Եղ քաղաքը հիմա աւերակ է: Էն ահագին աւերակները, որոնց մէջ երեսում են մեծմեծ քարեր, պատեր, առաջուայ շինութիւնների քարէ սիւների կտորտանք, ցոյց են տալիս, որ էդ քաղաքը մի ժամանակ շատ ընդարձակ քաղաք է էլել: Կափառնայումը մի շատ յարմարաւոր կենդրոն, լաւ առուտուրի տեղ էր Հրէաների ու հեթանոսների համար:

Էդ քաղաքը Քրիստոս Հրէաների միւս քաղաքներից աւելի սիրեց և իր բնակութիւնը էնտեղ հաստատեց: Նա էնքան էր սիրում էդ քաղաքը, որ նրա մասին խօսելիս աւետարանիչներն ասում են՝ «Ի՞ր քաղաքը»: Աշխարհների ու ծովերի Տիրոջը, երկնքի ու երկրի Ստեղծողին հարկաւորուեց իր ստեղծած աշխարհների մէջ մի փոքրիկ անկիւն, մի փոքրիկ սենեակ վար-

ԶԱՐՉԱՐԱԾԻ ՇԱԲԱԹ

Ճել իր համար՝ իր քարոզութիւնների, իր կրթական սերմերը մարդկանց սրտերի մէջ ցանելու համար: Կուզե՞՞ս իմանալ, թէ Քրիստոս ինչպէս էր անցկացնում իր օրը: Նա ողջ ցերեկը քարոզում էր իր տանն ու գուանը լցուած ժողովրդի բազմութեանը. երեկոյին բժշկում էր իր մօտ բերած հիւանդներին. իսկ գիշերը, սարի գլուխը բարձրացած, աղօթքի էր կանգնում. և շատ անգամ էլ առաւտօտեան արշալոյսը Նրան աղօթելիս էր վրայ հասնում: Ո՞ւմ համար էր աղօթում արդեօք: Մենք, որ աղօթում ենք, մեզ համար, մեր որդոց, մեր ազգի, մեր եկեղեցու համար, «վասն խաղաղութեան ամենայն աշխարի» ենք աղօթում, Իրան՝ Յիսուսին ենք աղօթում: Յիսուս ո՞ւմ համար էր աղօթում: Նա էլ մեզ համար էր աղօթում՝ մեր փրկութեան, մեզ սատանայի գերութիւնից փրկելու համար: Նա իր Հօրն էր աղօթում, որ օրհնի ու յաջողեցնի իր սկսած սուրբ գործը: Ինչպիսի՞ հիւանդութիւններ էր բժշկում: Ամէն տեսակ. կոյրերին աչք էր տալիս, կաղերին՝ ոտք, մնջերին՝ լեզու, խլերին՝ ականջ. դիւահարներին դիւահան էր անում, անդամալոյժներին բժշկում էր, բորոտներին՝ սրբում, մեռելներին յարութիւն էր տալիս: Եւ էդ բոլոր բժշկութիւնները նա անում էր ոչ թէ բժիշկների պէս՝ դեղերով, այլ իր մէկ աստուածային խօսքով կամ ձեռքը հիւանդի վրայ զնելով: Ի՞նչ էր քարոզում նա: Նա քարոզում էր հաւատ դէպի ինքը, յոյս դէպի յաւիտենական կեանքը և սէր դէպի ամէնքը: Նա քարոզում էր մարդասիրութիւն և դրանով՝ աստուածայիրութիւն: Նա աշխատում էր հասկացնել, որ մարգարէների բոլոր գլուածքները և Աստծու տուած օրէնքները պարունակուած են մարդ և Աստուած սիրելու մէջ: «Ամբողջ Աստուածաշունչ Սուրբ Գրքի միտքը, ասում էր, էդ երկու կէտի մէջ է ամփոփուած»: Եւ շատ պարզ է: Ով մարդասէր չէ՝, նա չի կարող աստուածասէր ըլնել: Ինչո՞ւ. որովհետեւ եթէ մարդուն, որ տեսնում

ենք ու չենք սիրում, Աստծուն, որ չենք տեսնում, ինչպէ՞ս կարող ենք սիրել: Մարդասիրութեան օրինակը Աստուած ինքն է տուել մեզ: Նա էնքան սիրեց մեզ, մե՞զ, որ երեսներս շուռ էինք տուել նրանից ու մեր չար գործերով անարգում էինք նրա սուրբ անունը, - էնքան սիրեց մեզ, ասում եմ, որ իր մէկ հատիկ, Միածին Որդին ուղարկեց աշխարհ մեր փրկութեան համար, էն էլ՝ ոչ թէ աստուածավայել փառքով, այլ՝ մի հասարակ մարդու պէս, մարդկային նուաստ կերպարանքով: Խսկ մենք ի՞նչ արինք դրա փոխարէն, ինչո՞վ ցոյց տուինք մեր աստուածսիրութիւնը: Ոչ մի բանով. դրա հակառակ՝ մենք խաչեցինք նրա Որդուն. մենք սպանեցի՞նք մեր Փրկչին: Դուք կասէք. «Մենք չենք խաչել թիսուսին. Հրէաներն են խաչել»: Էդ միեւնոյն է. թէ՝ մենք, թէ՝ Հրէաները՝ երկուսս էլ ստեղծուած ենք Աստծու անունը փառաւորելու համար, երկուսս էլ մարդ ենք: Բաւական է, որ մարդը խաչել է Աստծուն, արարածը սպանել է Արարչին. խսկ հա՞յ էր խաչողը, թէ՝ Հրէայ, էդ միեւնոյն է: Հրէաները խաչեցին, ոչ թէ հայերը՝ էն պատճառով, որ նա Հրէաների մէջ երևեցաւ, ոչ թէ՝ հայերիս մէջ: Մեր մէջը երևար Քրիստոս, մեր մէջը ապրէք, մեր՝ Հոգեորականներիս արարքները երեսներովս տար, մե՞նք կը խաչէինք նրան:

Ինձ թւում է, թէ էդ կողմից Հրէաները մեզնից լաւ են: Ինչպէ՞ս. է՞նպէս, որ Հրէաները չճանաչելո՞վ նրան՝ խաչեցին. խսկ մենք, - ճանաչելով, Աստուած դաւանելով ու նրա անունը մեզ վրայ կրելով, խաչում ենք նրան: Հրէաները մի՛ անգամ խաչեցին նրան, մենք ամէն օր ենք խաչում: Մեղքն ու մոլորութիւնները էնպէս խորն են բուն դրել մեր մէջը, որ օր չի անցնի, որ մեր որևէ արարմունքով չանպատուենք Քրիստոսի անունը: Մեր ամէն մի չար գործը մի նոր մեխ է, որ մենք ցցում ենք նրա սուրբ ձեռքերին ու ոտքերին: Մեր ամէն մի կիրքը, մեր

ամէն մի ցած սրտուզելիքը, որի ձեռք բերելու համար չենք քաշւում ամէն տեսակ անխիղճ ու անամօթ չարութիւն անելուց՝ մէկի տունը քանդելուց, միւսի անունը կոտրելուց, երրորդի վիզը կտրելուց, - մեր էդ ամէն կիրքը, ասում եմ, մի նոր փշէ պսակ է, որ զնում ենք նրա աստուածային գլխի վրայ: Հապա ամէն անգամ նրա պատուական մարմինն ու արիւնը անարժանութեամբ ճաշակելիս մի՞թէ նորից չենք խաչում նրան:

Բայց պատճառն ի՞նչ էր, որ հրէաները խաչեցին նրան: Ի՞նչ էր արել նա, որ ամէն տեսակ ստեր հնարեցին նրա մասին. յանցանքն ի՞նչ էր: «Յանցանքների քաւողը» ի՞նչ մեղք, ի՞նչ յանցանք պէտք է ունենար: Ոչի՞նչ: Յիսուս ամէն անարգանք կրեց, ամէն անպատճութիւն ստացաւ միայն էն պատճառով, որ ճշմարտութիւնը խօսեց, ճշմարտութիւնը պաշտպանեց, ճշմարտութիւնը բարձրացրեց: Եւ ճշմարտութեան առաջին մարտիրոսը, առաջին նահատակը ինքն էլաւ: Բայց ինչպէ՞ս պաշտպանեց ու բարձրացրեց ճշմարտութիւնը. աշխարհի հրապարակի՛ վրայ, դատաւորների ու թագաւորների՝ առաջը, ժողովրդի բոլոր դասակարգերի դիմացը: Նա չխնայեց ո՛չ դպրին (ուսումնականին), ոչ փարիսեցուն, ո՛չ քահանային, ո՛չ ժողովրդին: Ամենքի պարսաւելի, կեղտոտ արարմունքները երեսներովը տուեց: Մէկ էդպիսի մարդու մեր ժամանակներում քանի՞ օր գլուխն ուսերի վրայ կը թողնէին: Բայց Քրիստոս ամբողջ երեք տարի քարոզեց ճշմարտութիւնը, որի համար ինքը աշխարհ էր եկել: Զէ՞ որ ինքն էր անձուկ «Ճանապարհը» մարմնացած ճշմարտութիւնը և երանական «կեանքը». մի՛ խօսքով «Աստուած ճշմարիտ, յԱստուծոյ ճշմարտէ»: Մեզանում ճշմարտութիւնը միշտ ոտքի տակ է ընկած. ոչ ոք չէ համարձակում բարձրացնել նրան, իսկոյն վլուխն առնում կորչում է: Ասած է. «Դրուստ խօսողը մի ձի

պէտք է ունենայ, ասի ու փախչի»։ Բայց Քրիստոս չէ թէ ճշմարտութիւնն ասելուց չէր վախենում հեռանում, այլ նրանք էին իսկոյն փախչում կորչում, որոնց վրայ թափում էր Նրա ճշմարտութեան կրակն ու կայծակը։ Շատ անգամ գալիս էլ էին նրան բռնելու. բայց երբ տեսնում էին, որ նա կանգնած է ինչպէս մի անսասան ժայռ, որ կուրծքը դէմ է տուել կատաղի ալիքներին, երբ տեսնում էին, որ Նրա խօսքերի ու խորհուրդների մէջ ճշմարտութիւն է թագաւորում, գլխները կախ՝ յետյետ էին քաշում, որ ամօթից գետինը չմտնեն Նրա աչքի առաջը։ Բայց սա մի վերջ պէտք է ունենա՞ր, թէ չէ. մինչև ե՞րբ պէտք է նրանք էղքան թուք ու մուր կուլ տային։ Պէտք էր ազատուել Նրանից։ Բայց ինչպէս անէին։ Ոչ ոք չէր կարող տրանջալ Նրա դէմ, որ նա ճշմարտութիւնն էր ասում խօսում։ Ո՞վ կը համարձակէր ասել, թէ՝ «Ճշմարիտն ինչու ես ասում, սուտն ասա»։ Երբ որ էդ չէր կարելի անել, մնում էր, որ Անմեղի մէջը մի մեղք գտնէին, մի բանում Նրան մեղաւոր դուրս բերէին, իրանց անօրէն գործին մի օրինաւոր ձև տային։ Գայլի ու գառան առակը լաւ օրինակ է մեզ համար։ Մի անմեղ, անարատ գառն է ըլնում՝ մի աղբիւրից ջուր խմելիս։ Յանկարծ աղբիւրի գլխին մի քաղցած գայլ է լոյս ընկնում և, գառնուկին տեսնելով ու նրան լափել ու զելով, բայց նրանում ոչ մի յանցանք չգտնելով, «երբ դու, ասում է, էղտեղ ներքեր խմում էս, էստեղ վերեր իմ խմելու ջուրը պղտորւում է»։ Քրիստոս էլ՝ «Գառն Աստուծոյ», ընկել էր գայլերի ձեռքը և պէտք է մատաղ գնար Հրէաների քահանայապետների չար նախանձին։

Նրանք Յիսուսին առաջ տարան իրանց սանէտրին կոչուած բարձրագոյն դատարանը, որտեղ եօթանասուն ծերեր դատաստան էին նստում, յետոյ՝ իրանց Աննա ու Կայիշափա դատաւորների մօտ, որոնցից առաջինը երկրորդի աներն էր։ Սրանք ոչ թէ

Մովսէսի օրէնքովն էին ընտրուած, այլ հոռմայեցիներից էին կարգուած^{*}։ Բայց որովհետև դրանք ո՛չ յանցանք գտան Քրիստոսի մէջ, ո՛չ էլ մահուան վճիռ տալու իրաւունք ունէին, էդ պատճառով, երբ 12 առաքեալների մէջ գտնուեց մէկը, գտնուեց մի թուղա, որ փողի սիրուցը, էն էլ ի՛նչ՝ 30 արծաթի, այսինքն՝ 25 ուուբլի 50 կոպեկի սիրուցը, գիշերուայ մթութեան մէջ ցոյց տուեց թշնամիներին Յիսուսի տեղը, համբուրելով Յիսուսին՝ մատնեց անմեղ Գառը գայլերի ձեռքը, ~ նրանք էլ, իրանց դատաստանով Նրան մահապարտ դուրս բերելով, մատներին փաթաթեցին մի քանի՛ դէսիցդէնից հաւաքած հնարած խօսք և Յիսուսի ձեռքերը՝ հրաշագործ ու արարչագործ ձեռքերը կապած՝ առաւօտը վաղ տարան հոռմայեցոց դատաւորի սենեակը։

Պէտք է գիտենաս, սիրելի՛ս, որ էդ ժամանակները Հրէաների ձեռքից խլուած էր իրանց թագաւորութիւնը, և նրանց երկրի՝ Պաղէստինէի վրայ տիրում էին կուապաշտ հոռմայեցիները։ Եւ որովհետև հոռմայեցոց երկիրը՝ Խտալիան, շատ հեռու էր Պաղէստինէից, էդ պատճառով նրանց կայսրները մի թագաւոր էին նշանակում էդ երկրի վրայ՝ նրան կառավարելու համար։ Բացի դրանից, կայսրի կողմից նշանակուած էր մի կուսակալ կամ դատաւոր, որ սովորաբար բնակում էր Պաղէստինէի Կեսարիա քաղաքում։

Հրէաները սաստիկ ատում էին հոռմայեցիներին և միշտ ատամները կրծտեցնում էին՝ նրանց լուծը իրանց վրայից թօթափելու, դէն գցելու համար։ Յիսուսի օրերում հոռմայեցոց կայսրն էր Տիբերիոսը, որ Հրէաների վրայ թագաւոր էր նշանա-

* Սրանք երեխն միասին էին կառարում քահանայապետական պաշտօնը, ինչ-պէս Յովհաննէս Մկրտչի քարոզութեան առաջին տարումը, և երեխն՝ առանձին, այսինքն՝ մի տարի մէկը, միւս տարի՝ միւսը. էս տարին մինչև իրանց Զատկի տօնը քահանայապետը Կայիշափան էր. իսկ հետեւալ տարին, Յիսուսի մահից յետոյ, եղաւ Աննան։

կել Մեծ Հերովդէսի^{*} որդի Հերովդէս Անթիպասին, իսկ դատաւոր էր ուղարկել Փրկչի 26 թուին դատաւորների մէջ վեցերորդին, որի անունն էր Պիղատոս:

Պասէքի կամ Զատկի տօնին, երբ Երուսաղէմ քաղաքում երկու միլիոն մարդ էր հաւաքւում, երկիւղ կար՝ չլինի թէ հրէաները կայսրի իշխանութիւնից ազատուելու փորձը փորձէին՝ ապստամբուէին: Էս պատճառով, ժողովրդի մէջ խաղաղութիւն ու կարգ պահպանելու համար, հռոմայեցի դատաւորը իր զօրքի մի մասը հետն առած՝ գնում էր Երուսաղէմ և իջնում Մեծ Հերովդէսի փառաւոր պալատում:



** Դա էն Հերովդէսն էր, որ, կարծելով, թէ Քրիստոս էլ իր պէս մարմնաւոր կերպով պէտք է թագաւորութիւն անի, կամեցաւ նրան սպանել տալ: Եւ դեռ Քրիստոս 15 ամսական երեխայ էր, երբ էդ քարափրտը Բեթղեհէմ քաղաքի չորս կողմը գտնուած 84 գիւղից 1462 անմեղ երեխայ կոտորել տուեց իրանց մայրերի գրկում՝ մտածելով, որ կարելի է մանուկ Յիսուսն էլ նրանց մէջը գտնուի ու սպանուի: Եղած երեխաների անշուչ մարմինները, ինչպէս կարկտի ջարդած նուան ծաղկներ, ծածկել էին գետինը:

ՊԻՂԱՏՈՍ

Կացեալ ի յատենի երկրորդ Աղամ՝ վասն առաջինն Աղամայ պարտեացն թողութեան՝ Համբերելով վասն զմեզ կեցուցանել:

Շարական

Ի՞նչ մարդ էր Պիղատոսը:

Դա մի հռոմայեցի էր, որ իր լաւութիւնովն էր, թէ խորամանկութիւնովը՝ հասել էր դատաւորական բարձր պաշտօնին: Բայց բանը պաշտօնների հասնելը չէ: Բանն էն է, որ մարդս իրան յանձնուած պաշտօնի զօրութիւնը լաւ հասկանայ, չափի իր ուժերը և էնպէս ընդունի մի պաշտօն: Էդ էլ դեռ բաւական չէ: Նա պէտք է ազնիւ ու անկողմնապահ ըլնի, իմ ու քո, բարեկամ ու օտար չպէտք է հարցնի: Նրա առաջը հայն ու վրացին, թուրքն ու քրիստոնէն մէկ պէտք է ըլնի: Նա իր ազգի օգուտը իր օգուտից բարձր պէտք է համարի: Մի՛ խօսքով՝ իր անունն ու պատիւը իր տեղը պահելու համար, իր վրէն մի բիծ, մի կեղտ չկպցնելու համար նա աւելի լաւ պէտք է համարի հրաժարուել, հեռանալ իր պաշտօնից, ՝ ինչքան էլ փափուկ, ինչքան էլ բարձր ըլնի էդ պաշտօնը, ՝ քան թէ իր խղճմտանքի հակառակ մի բան անի:

Էս բոլոր ասածներս պէտք է աչքի առաջ ունենայ ամէն բարձր պաշտօն ստացող մարդ, մանաւանդ՝ ուրիշների վրայ իշխելու, ուրիշներին կառավարելու ծանր պաշտօնը յանձն առնող մարդը: Հապա ի՞նչ ասենք էն մարդուն, որ դատաւորական սուրբ պաշտօնն է յանձն առնում: Ո՛չ բարեկամի սէրը, ո՛չ թշնամու ատելութիւնը, ո՛չ կաշառքի մեծութիւնը, ո՛չ պաշտօնից զրկուելու երկիւղը՝ ոչինչ բան չպէտք է ծոփ նրան արդարութեան ճանապարհից:

Գանք հիմա մեր հռոմայեցի կռապա՛շտ դատաւորին: Երբ Պիղատոսը Տիբերիոս կայսրի հրամանով Հռոմ քաղաքից դուրս եկաւ՝

Հրէաստան գնալու, անկասկած, մտքովն էլ չէր կարող անցկացնել, որ իր էդ նոր պաշտօնը պէտք է յայտնի անի իր անունը ոչ թէ մենակ Հռոմի ու Երուսաղէմի մէջ, այլև՝ ին բոլոր աշխարհների մէջ, որտեղ կարդացւում է Յիսուսի սուրբ Աւետարանը, որտեղ տօնւում է նրա մահն ու յարութիւնը։ Նա չէր կարող մտքովն անցկացնել, որ իր անելիք շատ դատերի ու դատաստանների մէջ, իր տալու շատ վճիռների մէջ պէտք է անի մէկ էնպիսի դատաստան, պէտք է տայ մէկ էնպիսի վճիռ, որ անջնջելի է մնալու Հռոմի դիւնական գործերի մէջ, քանի որ կարող է աշխարհում մնալ Հռոմն ու Հռոմայեցոց տէրութիւնը։ Պիղատոսը չգիտէր, որ դուրս դալով կուապաշտների աշխարհից և մտնելով աստուածապաշտների աշխարհը՝ պէտք է ոտք դնէր հրաշքների երկիրը։ Նա չգիտէր, որ էն օդը, որ պէտք է չնչէր ինքը, լի էր մարդարէների որոտացող ձայնով։ Զգիտէր, որ մտնում է մէկ էնպիսի երկիր, որի ամէն մի անկիւնը մէկ օր երկրպագելի է դառնալու, և որտեղ իր գոռոզ կայսրները ոտք կրիսելիս պէտք է մերկացնեն իրանց գլխները։ Զգիտէր, որ մի յիսուն տարուց յետոյ իր հպարտ Հռոմը աշակերտի պէս դասեր պէտք է առնի գալիլիացի ձկնորսներից, և որ իր պէս Հռոմայեցիներին գրուելիք առաքելական թղթերը ամէն օր պէտք է կարդացուին քրիստոնեայ աշխարհի բոլոր եկեղեցիներում։ Նա չգիտէր, որ հրէաստանը տնքում էր մեծմեծ բաների սպասելով, որ իսրայէլը անհամբեր սպասում է իր Մեսիային՝ իր Փրկչին, իր յաղթական թագաւորին, որ պէտք է նորոգէր Դաւթի թագաւորութիւնը, պէտք է ոտքի կանգնեցնէր Յակոբի կործանուած տունը, պէտք է բարձրացնէր նրա խորտակուած փառքը։ Նա չգիտէր վերջապէս, որ մտնելով Հրէաստանի սահմանը՝ մի աստուածային տեսարան, մի հրաշալի ու հրաշքներով լի թատրոն պէտք է բացուէր իր առաջը։ Պիղատոսի մօտ բերել են մի կալանաւոր, որին հրէաների նախանձոտ ու անգութ քահանայապետներն ու դատաւորները մա-

հապարտ են ճանաչել, բայց որի անցեալը, փոխանակ չար ու անկարգ գործերով գրոշմուած ընելու, բարեգործութիւններով ու հրաշքներով է զարդարուած։ Մարդացած Աստծու տեսքը նրա վրայ չարագործի տպաւորութիւն չէ անում. ընդհակառակը՝ նրա երեսից խոնարհութիւն, իմաստութիւն ու սրբութիւն է կաթկաթում։ Դատաւորը հէնց սկզբից հակւում է Մեղադրեալի կողմը։ Դեռ հալա գործի հետ չէ ծանօթացել, դեռ նա բանի էութիւնը չգիտէ, բայց մտքումը դնում է նրան անմեղ դուրս բերել։ Մի կողմը ինքն է կանգնած, միւս կողմը՝ քահանայապետներից խրատուած կոյր ժողովուրդը, ահագին ամբոխը. Մեղադրեալը ոչ մի պաշտպան չունի։ Տեսնենք՝ ինչպէս պէտք է զլուխ դուրս տանի։ Բայց ի՞նչ բանում են մեղադրում Կալանաւորին։ Իր տունը իր ձեռքով քանդող միամիտ ժողովուրդը, իր աչքի լոյսը իր ձեռքով հանող խաբուած ժողովուրդը նրան էս երեք բանումն է մեղաւոր ճանաչում։

1. Իբր թէ Յիսուս իրան հրէաների թագաւոր է համարում.
2. Իբր թէ չէ ժողնում, որ հրէաները հարկ տան Հռոմայեցոց կայսրին.
3. Իբր թէ իրանց 46 տարում շինած տաճարը ուզում է քանդել տալ ու երեք օրում շինել։

Ով որ ծանօթ է էլել Յիսուսի երեսուն տարուայ կեանքին՝ նրա ծնուած օրից մինչև Յովհաննէսից մկրտուելու օրը, և ով որ յետոյ՝ վերջին երեք տարուայ մէջ տեսել է նրա արած բժշկութիւններն ու հրաշքները, լսել է նրա քարոզութիւնները, պարզ կարող է հասկանալ, որ էդ երեք մեղադրանքներն էլ անմեղին զօրով մեղաւոր դուրս բերելու համար շատ անյաջող կերպով հնարած ստեր են։ Յիսուսին նրա արած ուրիշ ամէն մի գործի, ամէն մի խօսքի համար էլ էին մեղադրում հրէաների ուսումնականներն ու փարիսեցիները։ Բայց քանի որ ամէն էդպի-

սի ժամանակ Նա իր իմաստուն պատասխաններով պապանձեցնում էր էդ անխիղճ հակառակորդներին, որոնք զուր էին գլուխ կոտրում էմ՝ հոգիների արևի վրայ բծեր տեսնելու համար, էդ պատճառով բերան չէին բերում առաջուայ մանր-մունը մեղադրանքներն ու բամբասանքները:

Տեսնենք հիմա, թէ ինչ ստեր են փչում նրանք դատաւորի առաջը իրանց կաշառած սուտ վկաների բերանով:

Առաջին մեղադրանքը՝ իբր թէ Յիսուս իրան հրէաների թագաւոր է անուանում, ջրւում ու ջնջւում է Յիսուսի ամենապարզ կեանքով, որի մէջ ոչ միայն թագաւորելու ոչինչ ցանկութիւն չնկատուեց ամբողջ երեք տարուայ մէջ, այլև մի սովորական հպարտութեան նշոյլ անդամ չերեկցաւ: Որ Յիսուս մարմնաւոր կերպով հրէաների վրայ թագաւորելը իր մտքովն անդամ չէր անցկացրել, էդ պարզ երկում է իր ասած խօսքերից, թէ՝ «Աղուէսներն էլ գետնափոր բներ ունեն, երկնքի թուշուններն էլ ծառերի կատարին՝ բներ, բայց մարդու Որդի Յիսուսը էնքան տեղ էլ չունի, որ գոնէ կարողանայ իր գլուխը դնել, հանգստանալը»: Եւ մի՞թէ ինքը Պիղատոսը կը խաբուէր էդ ստախօսութիւնից, քանի որ նրանց լաւ էր ճանաչում: Նրան շատ լաւ յայտնի էր, որ իրանք հրէաները՝ հոռմայեցոց իշխանութիւնից ազատուելու համար մեծ ուրախութեամբ կընդունէին մէկ էնպիսի խոռվարար մարդու, որ իրան հրէաների թագաւոր համարելով՝ իրանց է թե ու թիկունք դառնում:

Երկրորդ մեղադրանքը՝ իբր թէ Յիսուս խառնում է հրէաների քաղաքական գործերի մէջ և չէ թողնում, որ նրանք հարկ տան կայսրին, էնքան հնարովի է, որ դատաւորին հարկաւոր էլ չէր դրա մասին հարցուփորձ անել Մեղադրեալին, քանի որ իրան լաւ յայտնի էր, որ ամէն իսրայէլացի օր առաջ ցանկանում էր ազատուել օտարին հարկ տալուց և նրա իշխանութիւնը ճա-

նաչելուց: Մի բան միայն ճշմարիտ է. էդ էն է, որ երբ փարիսեցիների աշակերտները մէկ անդամ ուզում էին Յիսուսին խօսքով բռնել, հարցըին Նրան, թէ՝ «Պէ՞տք է, որ կայսրին հարկ տանք, թէ ոչ», Նա հարկի դահեկանը (փողը) ուզելով և նրա մի երեսի վրայ փորագրուած պատկերը և միւս երեսի վրայ գրուած գիրը ցոյց տալով՝ պատասխանել էր. «Եթէ գիտէք, որ էս պատկերը ու էս գիրը կայսրինն են, ուրեմն գնացէ՞ք, կայսրինը կայսրին տուէք, Աստծունը՝ Աստծուն»: Նա, ուրեմն, ոչ թէ չէ արգելում, այլև հրամայում է՝ կայսրին պատկանած հարկը կայսրին տալ:

Երրորդ մեղադրանքը՝ Յիսուսի ասածը Երուսաղէմի տաճարի մասին, թէ՝ «Քանդեցէ՞ք էդ տաճարը, և ես երեք օրում նորը կը շինեմ», մի երկու բերնանի սուր էր, որ էս կողմն էլ էր կտրում, էն կողմն էլ. ուղիղ էլ էր, սուտ էլ էր: Դա մի կողմից մեղադրանք էր, միւս կողմից մեղադրանք չէր: Մեղադրանք չէր, որովհետեւ ինքը Յիսուս, երբ վերջին անդամ մաքրեց Երուսաղէմի տաճարը՝ Աստծու տունը, ամէն տեսակ բաներով առուտուր անողներից՝ գուրս քշելով նրանց, ասել էր ամենքի առաջ էդ խօսքերը: Բայց ուսումնականներն ու փարիսեցիները շատ լաւ էին հասկանում, որ էդ խօսքերը Յիսուս իր մարմնի մսեղէն տաճարի մասին էր ասում: Նրանք շատ լաւ էին հասկանում, որ տաճարի քանդելը իր մարմնաւոր աւերմունքը, իր մահն էր նշանակում: իսկ երեք օրում նորը շինելը՝ իր՝ երրորդ օրը յարութիւն առնելը: Մեղադրանք էր, որովհետեւ Նա քարից ու փայտից շինած տաճարի մասին չէր ասել, բայց այդ ըոպէին նրանց էդ վերջինն էր ձեռնտու:

Պիղատոսը, մտածելով՝ չինի թէ էս կալանաւորը ուղիղ որևէ կերպով կարող է վնասակար ընել Հռոմի կայսրութեանը, և կամենալով իրանից պարզը իմանալ, հարցնում է Յիսուսին.

«Ուղիղ, դու հրէաների թագաւո՞րն ես»:
Յիսուս պատասխանում է.

«Այ ողորմելի, երկնքի ու երկրի Ստեղծողին դու մի փոքրիկ ազգի թագաւորութի՞ւն ես տալիս. ծովերի ու ցամաքների Տիրո՞ջը հրէաների՞ թագաւոր ես անուանում: Աչքերդ լա՛ւ բաց արա. քո առաջը կանգնած է նա՛, «Որին երկինքը չէ բաւականանում իր մէջը տեղաւորելու». քո առաջը կանգնած է նա՛, «Որի համար երկինքը աթոռ է, երկիրը՝ ոտքի պատուանդան». քո առաջը կանգնած է նա՛, «Որի երեսի շլացուցիչ փայլից սերովք ու քերովքէ հրեշտակապետները թևերով երեսները ծածկում են»: Քո առջեր կանգնած է դատաւորների Դատաւորը, թագաւորների թագաւորը, աստուածների Աստուածը, «Որի թագաւորութեանը ո՛չ սկիզբն է էլած, ո՛չ էլ վերջը կըլնի»:

«Դու, ո՞վ ժամանակաւոր դատաւոր, որ հոգով ու մարմնով կպած ես էս նիւթական, էս հողեղէն, էս ժամանակաւոր աշխարհին, որ միայն մի փոշու հատիկ է իմ ստեղծած անսահման ու անչափելի տիեզերքի մէջ, դու, որ երկրաւոր փարթամութիւնները, ժամանակաւոր զուարձութիւններն ու անցաւոր վայելչութիւնները վերջնական երանութիւն ես համարում, դու, որ ոչինչ հասկացողութիւն չունես էն յաւիտենակա՞ն երանութեան վրայ, «որ աչքը չէ տեսել, ականջը չէ լսել, և մարդում մտքովն անդամ չէ անց կացել», դու ինչպէ՞ս կարող ես հասկանալ իմ թագաւորութիւնը:

«Էս պատճառով ես քեզ պա՛րզն եմ ասում. իմ թագաւորութիւնը էս աշխարհից չէ: Եթէ էս աշխարհից ըլնէր իմ թագաւորութիւնը, իմ միլիոնաւոր հպատակները կը թողնէի՞ն, որ ես բոնուի և քո առաջը բերուի: Ուրեմն, եթէ ես էս րոպէիս քո առաջը կանգնած եմ իբրև կալանաւոր, էղ նրանից է, որ իմ թագաւորութիւնը էս աշխարհից չէ, աշխարհային թագաւորութիւն

չէ. իմ թագաւորութիւնը սրտերի ու հոգիների՝ թագաւորութիւն է, յաւիտենակա՞ն թագաւորութիւնը»:

Յիսուսի էղ խօսքը մի մեծ ու նշանաւոր պատասխան էր Պիշտառոսի համար: Դրանով մի կողմից ոչնչանում էր էն ահն ու երկիւղը, որ ունէր դատաւորը Մեղադրեալի մասին, իբր թէ նա որևէ կողմից կարող է վնասակար ըլնել կայսրին.միւս կողմից շարժում է նրա հետաքրքրութիւնը՝ իմանալու, թէ ինչ թագաւորութիւն պէտք է ըլնէր Յիսուսի ասած թագաւորութիւնը, որ էս աշխարհից չէ: Էս պատճառով նա մի անգամ էլ հարցըեց. «Եթէ էղպէս է, ուրեմն Դու մասնաւորապէս հրէաների թագաւոր էլ որ չըլնես, գոնէ ընդհանրապէս թագաւոր ես»: Յիսուս պատասխանում է. «Դու ես ասում, թէ թագաւոր եմ: Բայց ես հնաց դրա համար եմ աշխարհ էկել, որ ճշմարտութիւնը պաշտպանեմ: Ամէն մարդ, ով ճշմարտութիւն է սիրում, լսում է իմ ձայնին»: Ո՞վ կարող է չզգարմանալ Յիսուսի էս բացարձակ պատասխանի վրայ: Նա թագաւոր է, որովհետեւ ինքն է ասում էղպէս: Բայց մենք պէտք է լսւ հասկանանք, թէ նա ինչպէս է հասել էղ թագաւորութեանը: Դրա համար էս հարցնենք մեզ, թէ՝ ի՞նչ է առհասարակ թագաւորութիւնը:

Թագաւորութիւնը անպատճառ երկրների տէր ըլնելը չէ: Թագաւորութիւնը էն մեծ արժանաւորութիւնն է, որին մարդս կարող է հասնել ուրիշ հազարաւոր մարդկանց մէջ: Թագաւորութիւնը մի կամքի՝ հազարաւոր կամքի վրայ իշխելն է: Էղպէս թագաւորութիւն անելու համար ո՛չ գահ է հարկաւոր, ո՛չ գանձ, ո՛չ երկիր, ո՛չ զօրք: Կան խելքի ու մտքի թագաւորներ, որոնց թագաւորութիւնը շարունակւում է դեռ իրանց մահից յետոյ էլ: Ելքի ու մտքի թագաւորները իրանց իշխանութիւնը տարածում են գերեզմանի խորքից. իրանք մեռած, փոշիացած են, բայց իրանց քարոզած մտքերը թագաւորում են աշխարհում, և միլի-

ոնաւոր մարդիկ իրանց յօժար կամքով հպատակ են գրւում նրանց թագաւորութեանը: Էղափիսի թագաւորների ո՞չ փառքն է յափշտակւում, ո՞չ իշխանութիւնը: Իսկ թիսուս թագաւորեց ոչ թէ մենակ մարդկանց խելքի ու մտքի վրայ, այլև՝ նրանց սրտերի վրայ: Մրանից աւելի ի՞նչ մեծ թագաւորութիւն կարող է ըլնել: Ով որ թիսուսի ձայնը լսում է, իր ամբողջ կեանքը նրան է հպատակեցնում, նրան է հնազանդում և իր սրտի ծունդն է խոնարհեցնում նրա առաջը:

Յիսուս՝ «Իմաստութիւն, Բան և Որդին», նշանակուած էր գաճի համար. և էդ գաճը բարձրանալու համար նա, յաւիտենականութիւնից իջնելով դէպի ժամանակաւորը, ծնուեց ինչպէս մարդ և մարդկանց մէջ շրջեց: Նրա գաճը երկնքումը Հօր աջ կողմն էր, երկրումը՝ Գողգոթայի գլխին տնկուած քառաթև խաչը: Նա կատարեց ամենամեծ «Ճմարտութիւնը»՝ անձնութրութիւնը՝ նուիրելով իր հօտին իր անձը:

Պիղատոսը, տեսնելով, որ Յիսուսի ասած թագաւորութիւնը ոչինչ կապ չունի Հոռմի թագաւորութեան հետ, արդէն նրան անմեղ է ճանաչում: Իսկ քահանայապետներն ու ծերերը, վախենալով՝ չըլնի թէ Կալանաւորը իրանց ձեռքից ընկնի, իրանց ասածն են ուզում առաջ տանել՝ ասելով. «Գրգոռում, խելքահան է անում ժողովուրդներին, քարոզում է ամբողջ Հրէաստանում Գալիլիայից սկսած մինչև Էստեղ»: Իրանց մեղադրանքի էդ վերջին մասը մի ամենաչար նենգութիւն էր, որ նրանք գործ դրին՝ Կալանաւորը ձեռքից չժողնելու համար:

Գալիլիան Պաղէստինէի չորս գլխաւոր մասերից մէկն էր և գտնւում էր Հերովդէս թագաւորի իշխանութեան տակ: Եւ թէպէտ Յիսուս ու իր առաքեալները գալիլիացիք էին, բայց գալիլիացիք յայտնի էին առհասարակ իրրե ամենաանհանգիստ մարդիկ: Եւ երբ դատաւորը հարցցրեց ու իմացաւ, որ Յիսուս

գալիլիացի է, գլխից հեռացրեց, ուղարկեց նրան Հերովդէսի մօտ: Էղափիս անելով՝ նա երկու օգուտ ունէր աչքի առաջ. առաջինը՝ որ կազատուէր էդ անախորժ գործից, որի տակից շատ բան պէտք է դուրս գար և դիպած կըլնէր հրէաների իշխանների, քահանաների ու փարիսեցիների քէֆին. Երկրորդ՝ մի հին հաշիւ կը վերջացնէր Հերովդէսի հետ:

Ահա թէ ինչ էր էդ հաշիւը:

Յայտնի է, որ Յովհաննէս Մկրտիչը Պաղէստինէի էն մասիցն էր, որ կոչւում էր Հրէաստան, ու գտնւում էր Պիղատոսի իշխանութեան տակ: Հերովդէսը իրաւունք չունէր նրան մահուան դատապարտելու. բայց իր աղջկան տուած իր թագաւորական խօսքը գետին չգցելու համար կտրել էր տուել Յովհաննէսի գլուխը, որ իր իշխանութիւնից դուրս բան էր: Էդ պատճառով էդ ժամանակից մօտ երկու տարի Պիղատոսն ու Հերովդէսը սառել էին իրարից, էլ բարեկամ չէին: Եւ հինգ առանց դրան էլ ի՞նչ բարեկամութիւն կարող էր ըլնել մի հրէայ թագաւորի ու մի հոռմայեցի դատաւորի մէջ, որոնցից ամէն մէկը միևնոյն երկրում հրամայող է կարգուած: Հերովդէսը թէպէտ Պիղատոսի իրաւունքի տակ է, բայց թագաւոր է. Պիղատոսը՝ թէպէտ դատաւոր, բայց երկրի իշխող կայսրի աչքն է: Յիսուսին Հերովդէսի մօտ ուղարկելու միւս օգուտն էլ էն էր, որ էդ թագաւորի հետ կը նորոգէր իր բարեկամութիւնը:

* Դրա ոխը սրտումը պահելով, երբ մէկ անգամ մի քանի գալիլիացիներ գնացին երուսաղէմ և տաճարումը գոհ էին մատուցանում. Պիղատոսը կոտորել տուեց նրանց հինգ տաճարի մէջ և նրանց արիւնը խառնեց իրանց զոհերի արեան հետ:

ՀԵՐՈՎԴԻՍ

Արհամարեաց զնա և Հերօդէս հանդերձ իւրօք զօրականօքն և այպն արարեալ՝ էարկ զնովաւ հանդերձս սպիտակս և ետ տանել անդրէն առ Պիղատոս:

Աւետարան

Էս Հերովդէսը երեխաների դահիճ, մանկասպան Հերովդէսի որդին էր: Նա՝ մանկասպան, սա՝ մարդասպան: Նա՝ անկարգ, սա՝ անառակ: Զօր անունը տարածուել է հազարաւոր մանուկներ կոտորելովը. որդու անունը տարածուել է իր եղբօրն ու մեծ մարդարէին սպանել տալովը: Թագաւոր անունը անարժան էս մարդը սիրահարուել էր իր եղբայր Փիլիպպոսի կին Հերովդիադայի վրայ, էս պատճառով իր եղբօրը սպանել տուեց և խղճի ու մովսիսական օրէնքի հակառակ՝ եղբօր կինը իրան կին առաւ: Վերջին և մեծ մարդարէ Յովհաննէս Մկրտիչը, նրա թագաւորական մեծութիւնը մի կողմը դրած, Աստուածաշունչը ձեռքին բռնած, էլ լափ չմնաց, որ երեսովը չտար. իր հարազատ կնոջ անունն ու պատիւը գետնի հետ հաւասարեցնելը յիշեցնելով, հարազատ, թագաւոր եղբօր արեան մէջ իր ձեռքը թաթախելը միտքը բերել տալով՝ էլ խօսք չմաց, որ չասէր, էլ թուք ու մուր չմնաց, որ չտար երեսովը: Հերովդէսը, որին ասում էին էլի Հերովդէս Անթիպաս, մեծ մարդարէի յանդիմանութիւնները չվելու համար նրան բանտ նստեցրեց: Յետոյ էլ անզգոյց կերպով մի յիմար խօսք բերնից դուրս թողնելու պատճառով դահիճ ուղարկեց բանտը և կտրել տուեց էն սուրբ մարդու գլուխը, որ պատրաստում էր Տիրոջ ճանապարհը:

Զատկի տօնն էր՝ Յիսուսի կեանքի վերջին Զատիկը: Էդ փուչ Հերովդէսը գտնուում էր Երուսաղէմում: Նրա մօտ էին էդ ժամանակ դալիլացի նշանաւոր մարդիկ անկարգ Հերովդիադան, նրա աղջիկ՝ թագաւորական հրաւէրքում պար էկող Սալոմէն, և Երուսաղէմացի ամենանշանաւոր մարդիկ: Երբ Յիսուսին բերին Հերովդէսի մօտ,

ԶԱՐՉԱՐԱԾԻ ՇԱԲԱԹ

33

նա շատ ուրախացաւ: Նրա ուրախութեան պատճառը մէկ էն էր, որ Պիղատոսը զրանով պատուել էր իրան ու բարձրացրել ժողովրդի աչքում, մէկ էլ էն, որ նա վաղուց ցանկանում էր տեսնել Յիսուսին: Բայց նա ցանկանում էր տեսնել ոչ թէ էնապէս, ինչպէս փափագում էր տեսնել Նրան կարճիկ Զաքէսոր, ինչպէս տեսնում էր բարեգործ և արդար Նիկողիմոսը, այլ էնապէս՝ դատարկ հետաքրքրութիւնից: Հերովդէսը շատ բան էր լսել Յիսուսի մասին, և հիմա, իր ամէն ցած, անասնական ցանկութիւններով կշտացած, յոյս ունէր, որ Յիսուսից մի հրաշք տեսնելով՝ կարող էր մի քանի բոպէ զուարձանալ: Անարդ արարած: Նա կարծում էր, թէ Յիսուս մի ձեռնածու, մի փոկուսնիկ է, որ իր և իր պալատականների առաջը մի քանի աշքակապութիւն անելով՝ սրտանց ծիծաղելու պատճառը կը դառնայ: Տեսնելով Յիսուսին՝ Հերովդէսը առաջարկեց Նրան էնպիսի դատարկ ու անվայել բաներ, որ միայն անկարգ ու լիրը մարդկանց քէֆը կարող էր բերել: Եւ շատ լաւ է արել աւետարանիչը, որ էդ անվայել առաջարկներից ոչ մէկը չէ յիշել: Դրանով, իհարկէ, նա չէ կամեցել կեղտոտել Աւետարանի սուրբ երեսները:

Թագաւորն ու իր մեծամեծները, աչքները չուած, ականջները սրած, սպասում էին, թէ ահա Յիսուս բաց կանի իր բերանը՝ կը սկսի խօսել, կը մեկնի իր ձեռքը՝ հրաշք կանի: Ինչո՞ւ. որովհետեւ նրանք լսել էին, որ նա էդ բաները անում էր հասարակ ձկնորս առաքեալների և մեղաւոր համարուած մաքսաւորների (մաքս հաւաքողների) մէջ: Բայց ողորմելիները չէին մտածում, որ էդ բոլոր ձկնորսներն ու մեղաւորները ուրիշ կերպով էին նրան հարցեր առաջարկում: Իսկ Յիսուս, Որի գլխովը էդ բոպէին յաւիտենականութեան մտքեր էին անցնում, լուռ էր մնացել: Թագաւորի ունայն հարցերին նա ոչ մի խօսք չպատասխանեց: Նա, իհարկէ, չէր կամենում «մարդարիտ ցրուել խոզերի առաջը և սրբութիւնը տալ չներին»:

Թէպէտ Հերովդէսը շատ նեղացաւ Յիսուսի արարմունքից և

մի քիչ իր սիրտը տեղը բերելու համար, մի քիչ էլ կատաղած ժողովրդի կամքը կատարելու համար կարող էր նրան ոտքից-գլուխ մեղաւոր դուրս բերել, բայց թովհաննէս Մկրտչի պէս մեծ մարդարէ սպանել տալուց յետոյ չէր ուզում մի ուրիշ նոր մարդարէի էլ մահուան պատճառ դառնալ: Բայց էլի կամեցաւ մի քիչ զուարձացնել իր պալատի ծառայողներին: Նա դրանով ուզում էր իր վրէժն առնել էն մարդուց, որ էդպէս անուշադիր թողեց իր արքայական խօսքը և անհնագանդ գտնուեց իր առաջը: Հիմա նա կամենում էր գոնէ ծիծաղել նրա վրայ:

Սովորութիւն կար Հռոմում, որ էն մարդիկ, որոնց վրայ ժողովուրդը աչք ունէր՝ բարձր պաշտօններ տալու տէրութեան մէջ, սպիտակ շոր էին հագնում: Հերովդէսն էլ, ուզենալով անպատուել Յիսուսին, նրա՝ հրէաների թագաւորական գահի վրայ բազմելը ծաղրելու մտքով, հագցրեց սպիտակ շոր: Նա սրանով ոչ թէ ծաղրեց Յիսուսի՝ թագաւոր դառնալու յոյսն ու արժանաւորութիւնը, այլ և ուզեց հասկացնել, որ հրէաների էս անկոչ, ողորմելի թագաւորը արժանի է ոչ թէ մահուան, այլ աւելի մեծ բանի՝ արհամարհանքի, մարդատեղ չդնելուն: Էդ շորով Հերովդէսը յետ ուղարկեց Մեղադրեալին դատաւորի մօտ: Արանով, ինքն էլ իր կողմից Պիղատոսին պատուելով, համարեա թէ էր ուզում ասել: «Թէպէտ էս մարդը իմ իշխանութիւնիցն է, բայց որովհետեւ բռնուած է Երուսաղէմում, որ քո իշխանութեան տակն է, էս պատճառով աւելի քեզ է արժանի, որ դատես Դրան, քան թէ ինձ»: Իսկ Պիղատոսը, ուզիդ է, չազատուեց Յիսուսից, բայց գոնէ շահեց թագաւորի սիրտը: Էդ օրից Պիղատոսն ու Հերովդէսը կրկին լաւ բարեկամներ դարձան: Աստծուն ատելը մարդկանց սիրուելու պատճառ դարձաւ:

ԴԱՏԱՊԱՐՏՈՒԹԻՒՆ

Ժողովեալ հրէիցն՝ կշռեցին արծաթ բազում. առեալ տարան առ Պիղատոս, ասեն. «Ի խա՛չ հան, ի խա՛չ հան, զի հայհոյիչ է օրինաց»:

Շարական

Պիղատոսը ինչքան ուրախ էր, որ մի նպատակին հասաւ, ինքան տիսուր էր, որ միւս նպատակին չհասաւ: Հերովդէսի հետ հաշտուեց, բայց իր խղճի հետ չկարողացաւ հաշտուել: Ինչքա՞ն աշխատեց նա ազատել իրան էդ անախորժ գործից՝ Յիսուսի մահուան վճիռը հաստատելուց, չկարողացաւ: Նա ուզէր-չուզէր՝ պէտք է նորից ձեռք առնէր էդ գժուար գործը, որ իր բոլոր ծանրութեամբ պառկած էր իր սրտի վրայ: Իրան մնար՝ նա սիրով կազատէր Մեղադրեալին. բայց էնքան քաջութիւն չունէր, որ մինչև վերջը պաշտպանէր նրան: Երկու պատճառով նա գժուարանում էր գործը իր ուզածի պէս գլուխ հանել. մէկ՝ որ բնաւորութիւնով մի թոյլ ու անվստահ մարդ էր և շատ էլ բանի ետևից ընկնելու գլուխ չունէր. մէկ էլ մտածում էր, որ՝ եթէ զօռ (բռնութիւն) բանեցնի, ժողովուրդը մի խօսքի կը կանգնի, կապստամբուի, և ինքը անճարացած՝ իր զօրքով կը սկսի մեծ կոտորած անել և կը պատժուի կայսրից, որ նրան կարող է ասել, թէ՝ «Ինչո՞ւ մի հրէայի համար թողիր, որ էդքան խոռվութիւն ու զալմաղալ ընկնի. չէ՞ որ դու աւելի պէտք է համաձայնէիր մի հրէայ խաչել ժողովրդի խնդրքի համաձայն, քան թէ էսքան մեծ վնասի ու կոտորածի պատճառ դառնալ»:

Բայց էդ խճուած դրութեան մասին մտածելիս յանկարծ մի նոր միտք ծագեց նրա գլխումը: Յայտնի է, որ երբ թագաւորներին մի ընտանեկան ուրախութիւն է պատահում՝ ամուսնութիւն,

որդենութիւն կամ մի վտանգից, փորձանքից ազատութիւն, նրանք մտքները բերելով տարիներով բերդերումը մաշուող բռնուածներին՝ ազատութիւն են տալիս նրանց։ Մի էղակիսի սովորութիւն էլ Պիղատոսի ժամանակներից մօտ 1500 տարի առաջ մտել էր հրէաների մէջ։ Զատկի տօնին, երբ իսրայէլացիները կատարում են իրենց՝ եղիպատոսի մէջ ինչպէս ճորտ ծառայելուց ազատուելու ուրախութիւնը, դատաւորին խնդրելով ազատութիւն էին տալիս մի որևէ բռնուածի։ Պիղատոսը կամենում էր օգուտ քաղել էս սովորութիւնից։

Նրա մօտ էդ ժամանակը բռնուած էր Բարաբբա անունով մի չարագործ՝ մի աւազակ մարդ, որ էդ օրերում մարդասպանութիւն էլ էր արել երուսաղէմում։ Դատաւորը յոյս ունէր, որ եթէ ժողովրդին հարցնի, թէ՝ էդ երկու կալանաւորներից որի՞ն էք ուզում ազատեմ, ժողովուրդը կը խնդրի, որ Յիսուսին ազատէ, որ ինչ է էն յայտնի աւազակը չազատուի։ Բայց չէր մտածում, որ դրանով իր ճանաչած անմեղ մեղադրեալ Յիսուսին էլ չարագործների ու մեղաւորների դասն է դասում։ Մի խօսքով՝ մարդը մնացել էր երկու ջրի արանքը։ Էղակս մտածելով՝ նա ասեց նրանց. «Էս մարդուն բերիք իմ ձեռքը գցեցիք՝ ասելով, իբր թէ մոլորեցնում է ժողովուրդներին։ Բայց ահա ես Սրան դատեցի, քննեցի ձեր աչքի առաջը և ոչինչ բանում մեղաւոր չգտայ։ Ուղարկեցի սրան Հերովդէսի մօտ, նա էլ ոչինչ մեղաւորութիւն չգտաւ Սրանում։ Է՛հ, որ էղակս է, ես էլ կը խրատեմ ու կարձակեմ»։ «Կը խրատեմ» ասելով՝ Պիղատոսը ուզում էր ասել «Ճեծել կը տամ»՝ կարծելով, թէ էսպէսով մի քիչ էլ ժողովրդի սրտովը վարուած կըլին։

Էս անսպասելի առաջարկութիւնը շատ զարմանալի թուեցաւ ժողովրդին։ Բայց Պիղատոսն էլ մի ուրիշ կողմից էր շփոթում։ Նրա կինը, որի անունը, ինչպէս ասում են, կլադիա Պոռկուլա

էր, գիշերով մի սարսափելի երազ տեսաւ, որից նա էնքանը լաւ իմացաւ, որ եթէ իր ամուսինը դատապարտի Արդարին, դրանով Աստծու պատիժը կը բերի իր գլխին։ Երբ նա առաւօտը լսեց, որ իր ամուսինը արդէն սկսել է Յիսուսի դատաստանը, իսկոյն մարդ ուղարկեց մօտը՝ ապսպարելով. «Չընեմ-չիմանամ, որ դու մի բան անես էդ Արդարին։ որովհետեւ գիշերս շատ անցք անց կացաւ Դրա մասին երազում»։

Թէպէտ մեր ժամանակում միայն տգէտներն են հաւատում երազներին, իսկ խելքը գլխին մարդը նրանց ոչինչ նշանակութիւն չէ տալիս, բայց էլի գտնուում են մեզանում ոչ թէ մենակ անուսում, տգէտ, այլև շատ ուսում առած մարդիկ, որոնց վրայ երազը խոր տպաւորութիւն է անում։ Ուր մնացին էն ժամանակուայ հեթանոսները, որոնք մանաւանդ կանանց երազներին մեծ նշանակութիւն էին տալիս։ Էդ պատճառով շփոթուած ու շուարած Պիղատոսը կրկին մտաւ դատարանը և մտածում էր, թէ՝ հապա ինչպէս անի, որ լաւ ըլիի։

Նրա հեռացած ժամանակը քահանայապետերն ու ծերերը տաքացրին ժողովրդին որ Բարաբբայի ազատութիւնը պահանջեն, Յիսուսի՝ մահը։ Շուտով դատաւորը սենեակից դուրս գալով՝ հարցրեց. «Էդ երկուսից որի՞ն էք ուզում որ արձակեմ»։

«Բարաբբայի՞ն, կանչեց միաձայն միամիտ ժողովուրդը։

Էս պատասխանը էնպէս անսպասելի էր Պիղատոսի համար, որ նա, իբր թէ լաւ չհասկացաւ, կրկին հարցնում է.

«Հապա Յիսուսի՞ն ինչ անեմ, որին էլի ասում են Քրիստոս։ «Քրիստոս» բառը, որ հրէարէն «Մեսիայ», այսինքն՝ «Օծեալ» է նշանակում, դատաւորը նպատակով է աւելացնում։ Նա դրանով ուզում էր արիւնն աչքերն առած ժողովրդի միտքը բերել, որ Յիսուս նրանց սպասած Մեսիան է, կամ նրա նման մի բան, որ

ինչ է՝ խղճան, գութները շարժուի անմեղ Մեղադրեալի վրայ։ Եղճը արդէն էնքան շփոթուած է, որ իր արածը չէ հասկանում, թէ չէ իր դատաւորական իշխանութիւնը ժողովրդին ինչո՞ւ կը տար։ Ուղիղ է, նա խորամանկութեամբ դրեց իր հարցը, բայց էս անգամ սխալուեց իր հաշուի մէջ։ Թէ նա էղպէս արեց, ժողովուրդն էլ յետ չմնաց նրանից. նա էլ աւելի պարզ դրեց իր պահանջը՝ գոռալով՝ «Խաչի՛ր Դրան»։ «Խաչի՛ր Դրան»։ Եւ ո՞վ է պահանջում էս պատիժը. Էն ժողովուրդը, որ Յիսուսի վերջին անգամ երուսաղէմ մտնելու օրը բառ չէր գտնում Նրան պատուելու համար և իր վերարկուն հանում, Նրա ճանապարհին փիանդագ էր անում, իր սիրտը՝ միջի բոլոր ազնիւ գդացմունքներով, Նրա ոտքի տակն էր խոնարհեցնում։ « աչի՛ր Դրան», շողուում է կուրացած ժողովուրդը և ուրիշ ոչինչ չէ ուզում լսել. և նրա գոռալը էն է՝ յաղթելու վրայ էր։ Իսկ դատաւորը նրանց քարացած սրտերը կակղացնելու համար ուզում էր մտքումը դրածը առաջ տանել։ Իսկոյն վաթսուն հատ կոապաշտ զինուոր տանում են Յիսուսին մի սիւնից կապում և, չորս կարգ բաժանուած, խարազանները ձեռքներն առած, ով ինչ ուժ ունէր՝ Նրա վրայ էր բանեցնում։ Նրանք ծեծում էին Նրան հերթով. Երբ առաջին 15 հոգին ուժից ընկնում էին, յետոյ միւս 15 հոգին էր խփում, ու էղպէս շարունակեցին ամբողջ հինգ ժամ։ Զինուորներից մէկը խարազանով էր խփում, միւսը՝ կարիճով, այսինքն՝ էնպիսի խարազանով, որի ծայրին կարիճի ձեռվ մի երկաթ էր ամրացրած՝ մարմինը աւելի խոցուելու համար, որն էլ՝ ձաղկիչ ասուած դալար (կանաչ) ճիպոտով, միւսներն էլ՝ մի-մի դրանց նման գործիքներով։

«Բայց կարող ես հարցնել՝ ինչպէ՞ս չմեռաւ Յիսուս էղքան տանջանքների մէջ»։ Էն պատճառով չմեռաւ, որ ինքն էր իր իշխանութիւնով երկարացնում իր կեանքը, որ չմեռնի։ Եթէ իր

աստուածային կամքովը չըլնէր, էղ բոլոր տանջանքների տասը մասից մի մասն էլ բաւական էր, որ նա հոգին աւանդէր։ Ծեծով չբաւականացած՝ յետոյ սկսում են ծաղրել Նրան։ Նրա թագաւորութիւնը անպատճելու համար՝ դալար փշերը ոլորելով մի պսակ շինեցին ու դրին գլխին. և որ գլխիցը վեր չընկնի, փայտով խփեցին, էնպէս որ պսակի սրածայր փշերը ոչ թէ մենակ կաշուի ու մսի մէջ խրուեցին, դեռ գլխի ոսկրներին էլ հասան։ Մի կարմիր վերարկու առան գցեցին ուսերին, մի ջարդուած գաւազան տուեն ձեռքը, յետոյ երեսը ծածկեցին. ապտակում (սիլլայ խփում), թքում էին երեսին և, իբրև էղ ողորմելի թագաւորի հպատակներ, ծունը դնելով առաջը, ծաղրելով ասում էին. «Ապրե՛ս, կեցցե՛ս, հրէաների՛ թագաւոր»։

Եւ ո՞ւմն են տալիս էղքան ծեծն ու անպատճելութիւնը՝ փշի պսակ են դնում Նրա գլխին, որ գնում է մեր մեղքերի փուշը վերացնելու և որ միւս անգամ գալու ժամանակը լուսեղէն, անթառամելի պսակներ պէտք է դնի նրանց գլխներին, ովքեր իր անունը փառաւորել են էս աշխարհում։ Ծեծում են Նրա գլուխը, որ է «Լոյս փառաց և նկարագիր էութեան Հօր», որ մեր ամենիս ստեղծող Հայր Աստծու պատկերն է։ Ծածկում են Նրա երեսը, որ մարդկանց սրտերի խորհուրդները տեսնող սրտագիտ Աստուածն է։ Նրան են ապտակում ափով, որ իր ափովն է չափում ծովերի ու ովկիանոսների ջրերը։ Թքում են Նրա երեսին, Որի թուքը լոյս էր տալիս կոյրի աչքերին։ Ծունը դնելով Նրան էին ծաղրում, Որին ծունը են խոնարհեցնում երկնքի հրեշտակները, երկրի մարդիկ և անդունդների չար ոգիները։ Դա տառորը էսքանը բաւական համարելով՝ ծեծուած, ջարդուած, արնաշաղախ Յիսուսին դուրս է բերում ու կանգնեցնում ժողովրդի առաջը։ Ի՞նչ տեսարան։ Էն Յիսուսի երեսին, որ նազարէթի բոլոր տղամարդկանց մէջ մի ժամանակ ամենագեղեցիկն

էր, հիմա էլ մարդու կերպարանք չէ մնացել: Նրա էս ողորմելի ու ամենայաւալի տեսքը քարերին էլ կը լացեցնէր, ի՞նչ թէ մարդկանց: Եւ դրա վրայ դնելով իր յոյսը՝ Պիղատոսը ասում է ժողովրդին. «Ահա՝ ձեր թագաւորը: Ես կատարեցի ձեր սրտի ուղածը. ուզում էիք սրան խայտառակուած տեսնել, ես արդէն էնքան ծեծել տուի, որ դժուար թէ ճանաչէք սրան: Ուրեմն, էլ մի՞ք կրկնի ձեր անիրաւ ու անողորմ պահանջը. դուք է՛լ հանգստացէք, ինձ էլ հանգիստ թողէք»:

Իսկ խիղճը մեռցրած ժողովուրդը իր մտքումը դրածը առաջ տանելու համար նոր պատճառանք, նոր մահանէք է առաջ բերում: «Մենք օրէնք ունենք, ասում էշ, և մեր օրէնքով էդ մարդը պէտք է խաչուի, որովհետեւ իրան Աստծու Որդի է անուանում, որ միւնոյն է թէ հայհոյում է մեր Աստծուն»:

Էս վերջին խօսքերից դատաւորը նոր է հասկանում, որ ժողովրդի հակառակութիւնը ոչ թէ նրա մասին է, որ Յիսուս իբր թէ իրան մի սովորական, աշխարհային թագաւոր է համարում, այլ՝ որ իրան Աստծու Որդի, հրէաների Փրկիչ է անուանում: Փառի (կեղեանքի) պէս մի բան վէր է ընկնում նրա մտքի աչքից, և կռապաշտ դատաւորը մտածում է. ուղիղ, էդ Մեղադրեալը խօաստուածների որդի չէ⁹. Նրան էնքան ծեծ տալը, նրան մահուան դատապարտելը մի չտեսնուած պատուհաս ու անբաղտութիւն չի¹⁰ բերի իր գլխին, ու դրանով չի¹¹ կատարուի իր կնոջ երազը: Եւ էսպէս, նա աւելի մեծ ահ ու դողի մէջ ընկնելով, ներս է տանում Յիսուսին իր սենեակը և հարցնում. «Դու որտեղից ես՝ մարդկանցից ես՝ թէ¹² աստուածներից»: Պատասխան չկայ:

Դատաւորը էս անսպասելի լոռութիւնից իրան ու իր պաշտօնի բարձրութիւնը անպատուած է համարում: «Ինձ հետ է՛լ չես խօսում, ասում էշ, նա էս զարմանալի ու չտեսնուած Մեղադրեալին. չգիտե՞ս, որ քեզ խաչելն ու արձակելը ինձնից է կա-

խուած: Զէ՛ որ քո կեանքի ու մահուան իշխանութիւնը ի՛մ ձեռքումն չես»:
Էն ժամանակ Յիսուս հեղութեամբ պատասխան է տալիս նրան. «Դու ինձ վրայ ոչինչ իշխանութիւն չէիր կարող ունենալ, եթէ էդ իշխանութիւնը վերևից ըլնէր տուած քեզ: Էս պատճառով ով որ ինձ քո ձեռքը գցեց, նա մեծ մեղք արեց: Բայց էս էլ կասեմ քեզ, որ թէպէտ հրէաների դատաւորները, նրանց քահանայապետները պակաս մեղաւոր չեն, բայց որ դու էլ նրանց անիրաւ մեղադրանքի առաջը յաղթուեցիր, չպաշտպանեցիր ճշմարտութիւնը, ինչպէս վայել էր մի անաշառ ու արդար դատաւորի, դու էլ էդ պատճառով անմեղ չես: Թէպէտ դու, ուղիղն ասած, ոչինչ վատութիւն չես արել ինձ, այլ կամենում ես ազատել, բայց որովհետեւ չարիր ինձ էն ամէն լաւութիւնը, ինչ որ կարող էիր անել, եթէ միայն փափուկ պաշտօնիդ վրայ չդողայիր, էդ պատճառով դու է՛լ մեղաւոր ես»:

Էս էր Յիսուսի վերջին խօսքը, որ նա ասեց հոռմայեցի դատաւորին:

Տանջուած ու խայտառակուած Մարդու բերանից դուրս եկած էս մեղմ ու հանդարտ խօսքերը խորը կերպով տպուեցին Պիղատոսի սրտումը: Նա զգում է, որ սովորական կալանաւոր չէր կարող իրան էդ խօսքերն ասել: Նա քիչ-քիչ հասկանում է, թէ որտեղից պէտք է ըլնէր էդ Յիսուսը: Էդ պատճառով հիմա աւելի է աշխատում, որ նրան մի կերպով ազատի: Նրա էդպէս մտածելու հետ կատաղած ժողովուրդն էլ վերջին հնարքն է բանեցնում: «Էդ մարդը, ասում էշ, իրան թագաւոր է անուանում. բայց ով որ իրան թագաւոր է անուանում, նա կայսրին հակառակ է, թշնամի է. և եթէ դու դրան կարձակես, ուրեմն կայսրին հաւատարիմ չես»:

Էս խօսքերը սուր նշտարի պէս վիրաւորում են դատաւորի

ցաւած տեղը: Նա գիտէր՝ ի՞նչքան կասկածոտ ու անդուժ էր Տիբերիոս կայսրը։ Նա իրան որ լաւ քննում էր, իր խղճի առաջը շատ բանում մեղաւոր էր գտնում իրան։ Նա մտածում էր՝ չըլնի թէ վերջապէս հրէաները գանգատեն կայսրին ու մէկ-մէկ յայտնեն նրան իր արած բոլոր անիրաւութիւնները։ Էս պատճառով նա կայսրի անողորմ բարկութիւնից աւելի էր վախենում, քան թէ անյայտ աստուածների անծանօթ պատիմներից։

Դատաւորի սենեակի առաջը մարմար ու գոյնզգոյն քարերով մի բարձր քարայատակ բեմ էր շինուած։ Ուղիղ առաւտեան վեց ժամին Պիղատոսը նստեց էդ բեմի վրայ՝ բաց երկնքի տակ, որ հանդիսաւոր կերպով ամենքի աչքի առաջը տար վերջնական վճիռը ու վերջացնէր էդ անախորժ գործը։ Միրտը բարկութեան թոյնով լցուած է՛ն հրէաների դէմ, որոնք կայսրի ահաւոր անունը տալով՝ բանը էնտեղը հասցրին, որ նա ուղէր-չուղէր՝ պէտք է էդ վճիռը տար, դատաւորը ուզում էր իր բարկութիւնը թափել նրանց վրայ։ Էս պատճառով նա, ինչպէս կուպաշտ, ուզում էր ծաղրել նրանց, որ զուր յոյս էին դրել, թէ մի օր մի Մեսիայ, մի Փրկիչ պէտք է աշխարհ գայ ու իրանց ազատի օտարի ծառայութիւնից և նորոգի իրանց թագաւորութիւնը, և ասաց. «Ահա՛ առէ՛ք ձեր թագաւորը։ Դուք էսպիսի թագաւորի էք արժանի. ուրիշ լաւ թագաւորի, փրկիչ թագաւորի յոյս չունենա՛ք»։ Իսկ ժողովուրդը, արիւնն աչքը կոխած, գոռում էր. «Կորցրո՛ւ, կորցրո՛ւ, խաչի՛ր դրան»։ Հի մա Պիղատոսը արդէն էլ ոչինչ անելիք չունի։ Նա, ինչ կարողացաւ անել, որ հա՛մ Յիսուս չխաչուի, համ էլ ինքը չպատժուի կայսրից, արեց։ Հիմա նա աշխատում էր ծաղը ու ծանակով անպատուել հրէաներին ու էնպէս յանձնել Յիսուսին նրանց ձեռքը։ Նա հրամայեց իր ատենադպրին, որ անմեղ Գառան դատապարտութեան մասին էսպէս արձանագրի. «Յիսուս նազովրեցի՝ ազ-

դի կործանիչ, կայսրին բանի տեղ չդնող և սուտ մեսիայ, ինչպէս հաստատուեց իր ազգի մեծամեծների վկայութիւնով, թող տարուի հասարակաց պատժի տեղը և, իր թագաւորական մեծութիւնը ծաղրի գրուելով, խաչուի երկու աւազակների մէջ։ Էս պատճառով թող դահիճը պատրաստի՝ խաչը»*։ Երբ դատաւորը տեսաւ, որ քանի գնում է, շփոթն ու զալմաղալը սաստկանում է ժողովրդի մէջ, Յիսուսին տալիս է իր թշնամիների ձեռքը, որ խաչեն։ Հրէաները մէկ էսպիսի սովորութիւն ունէին. եթէ մէկը սպանուելու էր իր երկրից, իր գաւառից դուրս, էն ժամանակ էն դատաւորը, որի սահմանում նա սպանուելու էր, պէտք է ամենքի առաջը վկայութիւն տար իր անմեղութեան մասին։ Դրա համար նա լուանում էր իր ձեռքերը՝ ասելով. «Մեր ձեռքերը չեն թափել էս արիւնը»։ Սրա համար Պիղատոսն էլ, որի սահմանում պէտք է խաչուէր գալիլիացի Յիսուսը, հրամայեց, որ ջուր բերեն. բերին ջուրը, լուաց իր ձեռքերը բազմութեան առաջը՝ ասելով. «Անպարտ եմ ես էդ Արդարի արիւնին. դո՛ւք գիտէք»։ Ա. Օգոստինոսը սրա մասին էսպէս է ասում. «Ձեռքերը լուանում է, բայց արարմունքը չէ լուանում»։ որովետև Քրիստոսին նա է սպանում, ով նրա մահուան վճիռն է տալիս։

Իսկ անմիտ, կատաղած ժողովուրդը կանչում է. «Դրա արիւնը թող մեր ու մեր որդքերանց գլխի՛ն գայ»։ Էս նզովքի խօսքերի վրայ, որ իրանք հրէաները խնդրեցին Աստծուց, և որի տակը գտնուում են և պէտք է գտնուեն նրանք մինչև չդառնան ու չպաշտեն էն Յիսուսին, Որին խաչեցին իրանք, Պիղատոսը արձակում է մարդասպան Բարաբբային, իսկ Յիսուսին տալիս է իր զինուորներին, որ տանեն խաչեն, ինչպէս ցանկանում էր կոյր ամբոխը։

* Էս դատավճիռը հանուած է հռոմայեցոց թագաւորութեան ամենահին գրքերի միջից։

ԽԱԶ ԵՒ ՄԱՀ

Ով սքանչելի և տեսիլ ահաւոր. Զարարիչն երկնի
և երկրի այսօր տեսաք ի խաչին:
Շարական

Յիսուսի դատաստանը վերջացաւ. Նա դատապարտուեց խաչուելու: Փառք և խաչ. մէկը միւսի ծնողն է: Փառքը խաչ է պատրաստում մարդուս համար, խաչը՝ փառք: Երուսաղէմ մտնելու օրը, երբ Յիսուսի փառքը փուռեց ողջ քաղաքովը, նախանձու քահանաներն ու նենգաւոր փարիսեցիները նրա խաչի պատրաստութիւնն էին տեսնում: Իսկ հիմա, երբ անպարտը, անմեղը, արդարը գնում է խաչուելու, իր փառքն է պատրաստում. չէ՞ որ խաչը Յիսուսի երկրաւոր գահն էր: Զինուորները հանեցին Յիսուսի կարմիր վերաբրուն և հագցրին իր շորը, իսկ փշի պսակը թողին գլխին: Էսպէս նրան տարան խաչելու: Հոռմեյացոց սովորութիւնով խաչուողը ինքը պէտք է տանէր իր խաչափայտը: Յիսուս, որ գիշերուանից անտանելի տանջանքներով նահատակուել, բոլորովին ուժից ընկել էր, առաւ ծանր խաչը իր խոցոտուած ուսի վրայ: Բայց մի քանի ոտք փոխելուց յետոյ վէր ընկավ նրա ծանրութեան տակը: Ո՞վ պէտք է օգնէր, տանէր: աչը մինչև էդ ժամանակը անարդանքի, անպատութեան գործիք էր: Թէ՛ հրէայի ու թէ՛ հեթանոսի համար նրան ձեռք տալը պղծուել էր համարւում: Էդ պատճառով ճանապարհին ընկած խաչին ո՛չ ժողովուրդն է մօտենում, ո՛չ զինուորները: Էդ միջոցին հանդերի կողմից մի մարդ էր գալիս՝ Սիմոն անունով: Զինուորները կանգնեցնում են նրան և հրամայում են, որ տանի խաչը: Նա սիրով բարձրացնում է իր ուսին Յիսուսի խաչը: Երջանի՛կ մարդ. ի՛նչ կը մտածէր, որ էդ պիսով ինքը դառնում է Յիսուսի նոր թագաւորութեան դրօշակ (բայրաղ) տանողը: Նա տանում է դրօշակը մեծ զօրապետ Յիսուսի առաջից, որ գնում է դէպի վճռական պատերազմը՝ պատերազմ մահուան ու մեղքի դէմ, պատերազմ խաւարի իշխանութեան դէմ:

Երուսաղէմի մօտ կայ մի բլուր, որ կլոր ու մարդու գանգի ձև ունենալու պատճառով կոչում է «Գագաթի» կամ «Ճակատի»

ԶԱՐՉԱՐԱԾԻ ՇԱԲԱԹ

45

տեղ կամ «Տեղի կառափելոյ», այսինքն՝ գլուխ կտրելու տեղ, հրէարէն՝ «Գողգոթա», լատիներէն՝ «Calvarie locus» - որովհետեւ Յիսուսի ժամանակները էդտեղ էին կտրում մահապարտների գլուխը: Էդպէս կոչուելու միւս պատճառն էլ է՛ն է որ՝ հրէաների մէջ բերանէ բերան պատմւում էր թէ ջրհեղեղից յետոյ նոյ նահապետի որդի Սեմը և նրա որդի Արքաքասադը էնտեղ են թաղել Աղամի ոսկրների մի մասը և գլուխը: Էս հիման վրայ ասողներ կան, որ Քրիստոս խաչուեց Աղամի գերեզմանի վրայ: Եւ էս պատճառով երբեմն պղնձի կամ արծաթի խաչի վրայ, խաչելութեան պատկերի տակը դրուած կամ փորուած կամ նկարուած է ընում մարդու գանգ, որ Աղամի գլուխն է ներկայացնում:

Յիսուս բարձրանում է էդ բլուրը, որտեղ և տնկում են նրա ու երկու աւազակների խաչերը: Էն ճանապարհը, որի վրայով մեր Տէրը գնաց Գողգոթա, դեռ էսօր էլ կոչում է վշտերի կամ խաչի ճանապարհ: Դա 1321 քայլ կամ մի քառորդ ժամուայ ճանապարհ է. սկսում է Պիղատոսի բնակարանից և Երուսաղէմի արևելեան կողմից դէպի արևմուտք գնալով՝ տանում է Գողգոթա: Խաչի պատիքը հոռմայեցոց մէջ սահմանուած էր ծառաների, աւազակների ու խոռվարար մարդկանց համար: Հոռմի քաղաքացիները ամենեին չէին խաչում: Էդ պատիքը, որ սահմանուել էր քրէական յանցանքների համար, մտել էր նոյնպէս և գաւառները, նրանց հետ էլ Պաղէստինէ^{*)}: Խաչի մահը ամենատանջողական պատիմներից մէկն էր համարւում: աչուածի ձեռքերի ուռոյցքները պատուում, տրաքտրաքում էին, արիւնը խփում էր դէպի գլուխը, պակասն էլ լրացնում էին օրուայ շոգն ու օղը: Սոսկալի չարչարանքների մէջ մահը վրայ էր համում կամաց-կամաց: աչուածները սովորաբար 12 ժամից աւելի էին կենդանի մնում. երբեմն ապրում էին մինչև միւս

* Քրիստոսից 300 տարի յետոյ հոռմայեցոց կայսր Մեծն կոստանդիանոսը Յիսուսի պատուի համար բոլորովին արգելեց խաչի պատիքը:

օրը, շատ անգամ էլ՝ մինչև երրորդ օրը: Իսկ խաչուածների անշունչ մարմինները մնում էին խաչի վրայ մինչև լուծուելը, անդամը անդամից բաժանուելը, քայլայուելը: աչի գլխին գրում էին խաչուածի յանցանքը: Պիղատոսը հրէաներից վերջին վրէմն առնելու համար հրամայեց գրել խաչի ճակատին հրէարէն, բերձեներէն ու լատիներէն՝ «Յիսուս Նազովեցի՝ Թագաւոր Հրէից»: Էդպէս ահա, մեր մեղեքը բառնալու համար Աստծու Որդին կախուեց նզովքի փայտի վրայ, երկնքի ու երկրի մէջ, մերկ ու փշի պսակը գլխին: Նա խաչի վրայ էլ ծաղրուեց. և ծաղրուեց ոչ թէ մենակ խելառ ժողովրդից, այլև խաչուած աւազակից: Բայց ի՞նչ է պատասխանում խաչուած Արարիչը: «Հայր, ների՛ր սրանց, որովհետև չեն իմանում՝ ինչ են անում»: Զէ ասում կրակ ու կայծակ՝ թափիր սրանց գլխին, 12 բիւր հրեշտակ՝ ուղարկիր ինձ, որ սրանց վայնասունը երկինք հասցնեմ: Զէ ասում՝ գետինը փո՛կ ածա սրանց ոտքերի տակը, որ անդունզը սրանց կուկ տայ, ու սրանց յիշատակը վերանայ երկրի երեսից: Ների՛ր սրանց՝ ասում է, սրանք կարծում են, թէ մի խաբերայ են խաչել. բայց չգիտեն, որ իրանց ստեղծող Աստծուն են խաչել: Ուրբաթ առաւօտ, 6 ժամին, Յիսուս դատապարտուեց խաչուելու. Նրա ու աւազակների խաչերը պատրաստելում 3 ժամ անցաւ: 9 ժամին մեծ նահատակի ձեռքերն ու ոտքերը մեխուեցին խաչի վրայ: Երկա՛ր ժամանակ Գողգոթայի վրայ լուսեց ամէն բան, կտրուեց ամէն ձէն-ձուն: Խաչուածի տանջանքները հետզհետէ սաստկանում էին: Եւ քանի որ մարդը իր կատաղութեան ծայրը հասած՝ քարացրել էր իր սիրտը, գետինը սարսուռ զգալով վկայեց, թէ ինչքան սոսկալի էին չարչարանքները. երկիրը չարժուեց: Մօտ 12 ժամին, օրը ցերեկով, պայծառ արել խաւարեց : Էդպէսի խաւարում ո՛չ էլել է, ոչ էլ

* Արելի սովորական խաւարումներից չէր էդ, որովհետև արել խաւարում է միայն նոր լուսնի ժամանակը. իսկ ին օրը 14 օրուայ էր լուսնը: աւարումը նրանից պատահեց էս անգամ, որ արել իրան քաշեց իր բոլոր լոյսը:

կընի, որովհետև ոչ թէ միայն մի՛ աշխարհ խաւարեց, այլ բոլո՛ր աշխարհը, «ի վերայ ամենայն երկրի», ինչպէս ասում է աւետարանիչը. և ոչ թէ երկու-երեք րոպէ քաշեց, այլ ամբողջ երե՛ք ժամ աշխարհը կէսպիշերուայ մթութեան մէջ թաղուեց: Արել ծածկեց իր երեսը, որ չտեսնի իր Արարիչը խաչի վրայ:

Աստծու Որդին կախուած էր խաչի վրայ: Նրա ուսերի վրայ ծանրացած էր մարդկային ազգի մեղեքը բեռը: Նրա գլխի վրայ, փոխանակ մե՛ր գլխի վրայ, թափուում էր Աստծու բարկութեան ու դատաստանի լիք բաժակը: Նա խմեց, մինչև տակը դատարկեց էդ բաժակը: Ուղիղ 3 ժամին Յիսուս բարձր ձայնով ասեց իր երկրաւոր կեանքի վերջին խօսքը. «Հայր, Քո ձեռքն եմ աւանդում իմ հոգին»: Ասեց, գլուխը խոնարհեցրեց ու հոգին աւանդեց:

Մարդկային ազգի փրկութեան մեծ գործը կատարուած էր: Կնոջ Զաւակը ջարդել էր օձի գլուխը: Աստծու խաղաղութիւնը իջաւ հաշտեցրած աշխարհի վրայ: Երուսաղէմի տաճարի 30 կանգուն երկայնութիւն ու 4 մատ հաստութիւն ունեցող վարագոյրը վերից վար երկու կէս էլաւ: Նշան էր, թէ հինը վերջացաւ, սկսուեց նորը. թէ մշտնջենական Քահանայապետը մտաւ Սրբութիւն սրբոցը. թէ կործանուեց էն պատը, որ մեղքը կանգնեցրել էր Աստծու և մարդկանց մէջ. թէ դէպի Աստուած տանող ճանապարհը բացուեց: Մեծ-մեծ վէմ քարեր տրաք-տրաքուեցան, գերեզմաններ բացուեցան, շատ արդար ննջեցեալներ յարութիւն առան, մտան սուրբ քաղաք Երուսաղէմը և երևեցան շատերին : Իսկ ժողովուրդը, որ խաչի մօտ կանգնած՝ տեսաւ էս բոլոր հրաշքները, սոսկաց, դող անց կացաւ իր մարմնի միջովը, իմացաւ իր սիսալը և գլխին վա՛յ տալով ու կրծքին խիմելով վերադառնում էր Երուսաղէմ:

* Արդարների յարութիւն առնելը Քրիստոսի յարութիւնից յետոյ պատահեց. չէ՞ որ իրանից առաջ ոչ չէր կարող յարութիւն առնել, ինչպէս առաքեալն էլ ասում է. «Քրիստոս է անդրանիկ ի մեռելոց»:

ԹԱՂՈՒՄԸ

Կենդանատուն ամենեցուն այսօր դնի ի նոր
գերեզմանի, և գանձն անմահութեան
կնքի մատանեաւ քահանայիցն:
Շարական

Քրիստոսին խաչելու միւս օրը շաբաթ էր, էն էլ՝ շաբաթների՝
շաբաթը, որովհետև իրանց Զատիկն էր: աչուածների մեռած
մարմինները եթէ մնային խաչերի վրայ ու Հոտէին, կը պղծուէր
իրանց շաբաթը: Էդ պատճառով ուրբաթ երեկոյին երկու բարե-
պաշտ, իշխան մարդիկ՝ Յովսէփ ու Նիկողիմոս անունով, որոնք
սանչտրինի մէջ շատ աշխատեցին, որ Յիսուս չբռնուի ու չչար-
չարուի, բայց չկարողացան, գնացին դատաւորից իրաւունք
ստացան ու ցած բերին խաչից Յիսուսի մարմինը: Դրանք
առաջ, ինչպէս հրէաների օրէնքն էր, լուացին մարմինը, յետոյ
թանկագին խնկեր դրին չորս կողմը, անուշահոտ իւղով օծեցին,
թանկագին (բեկեզեայ) ազնիւ, մաքուր կտաւով փաթաթեցին և
թագաւորավայել յարգանքով ու պատուով տարան թաղեցին
մօտիկ էլած պարտէզում, քարից դուրս փորած մի նոր գերեզ-
մանի մէջ, որ Յովսէփը իր համար էր պատրաստել:

Հասաւ զատկական շաբաթը: Քահանայապետներն ու փարի-
սեցինները դեռ երկիւղի մէջ էին: Ինչքան կենդանի Քրիստոսը,
համարեա էնքան էլ մեռած Քրիստոսն էր ահ ու դող գցել
նրանց սրտերը: Մի կողմից՝ ժողովուրդը, որ փոշմանել էր իր
արածի վրայ, միւս կողմից՝ Յիսուսի՝ առաջուց ասած մի քանի
մարդարէական խօսքերը նրանց հանգստութիւն չէին տալիս:
Վախենում էին՝ չըլնի թէ ուղիղ Յիսուս նորից կենդանանայ,
յարութիւն առնի: Էդ պատճառով գնացին քահանայապետի կն-
քով (փեչատով) կնքեցին նրա գերեզմանի քարը ու վրէն պա-

Հապաններ կանգնեցրին:

Բայց ողորմելինները չիմացան, թէ ինչ արին: Նրանք ամբողջ
երկու հազար տարի օրեր էին համրում, իրանց Մեսիայի գալուն
էին սպասում. և հիմա իրանց մօտ եկած Մեսիան իրանց ձեռքով
յանձնեցին հեթանոսներին: Նրանք ուզում էին Յիսուսի յիշա-
տակը ջնջել աշխարհի երեսից, բայց հակառակը պատահեց.
Նրա անուանը փառաւորելու պատճառը դարձան: Ինչ որ կեղ-
ծաւոր փարիսեցին սարքեց մեռած Թաղուածի անունը ջնջելու
համար, էն արդարադատ Աստուածը գործ դրեց ճշմարտութիւ-
նը արևի պէս փայլեցնելու և անցքը անմահացնելու վրայ:



Մե՛ծ է յարութիւն Աստուած
Որդւոյն, քանզի դրունք երկնից
բացեալ եղեն, եւ հոտ անոյշ
բուրեաց յաշխարհս եւ լցոյց
զարարածս ամենայն:

Շարական

Լուսացաւ: Բացուեց ամենափառաւոր օրուայ արշալոյսը: 36 ժամ* Յիսուս մարմնով գերեզմանի մէջ մնաց. յետոյ Նրա հոգին միացաւ իր մարմնի հետ, և յարութիւն առաւ, վեր կացաւ, ոտքի կանգնեց գերեզմանում մեր ամենիս յարութեան Յոյսը: Բայց ոչ ոք չիմացաւ, ոչ մի մարդկային աչք չտեսաւ, թէ ինչպէս կեանք ու կենդանութիւն բաժանողը դուրս էկաւ կնքած գերեզմանից՝ առանց քարը գլորելու: Էն մարմինը, որ աստուածութեան հետ միացած՝ 33 տարի առաջ ծնուել էր կոյս արդանդից՝ կուսութիւնը չխախտելով, էսօր դուրս է գալիս կոյս գերեզմանից՝ կնիքը չխախտելով: Էդ ժամանակ երկիրը շարժուեց, և երկնքից մի հրեշտակ իջաւ՝ արևի պէս փայլուն երեսով, ձիւնի պէս սպիտակ շորով: Նա գլորեց գերեզմանի քարը և վրան նստեց: Պահապանները, որ երկրաշարժից վախեցած՝ մեռելի կերպարանք էին ստացել, հրեշտակին տեսնելով սարսափահար էլած՝ գերեզմանը թողին փախան:

Լոյսը բացւում էր: Երուսաղէմից գալիս էին չորս կին, որոնցից մէկը՝ Մարիամ Մագդղինացին, և որ փարիսեցի Սիմոնի

* Թէպէտ 36 ժամը ոչ թէ 3 օր է, այլ 1.5 օր, բայց աւետարանիների հաշուով 3 է, որից առաջնը համարւում է թաղուելու ուրբաթ երեկոն, երկրորդը՝ շաբաթ օրը, և երրորդը՝ յարութեան կիրակուայ առաւօտը:

տանը թանկագին, անուշահոտ իւղով օծել էր Յիսուսի գլուխը, որ արտասուրով լուացել էր Նրա ոտքերը և իր մազերով սրբել, երբ հասաւ պարտէզը, միւսներից առաջ գնաց, որ վերջին անդամ օծի Յիսուսի մարմինը: Ինչ սիրով որ նա կենդանի Յիսուսին էր սիրում, էն սիրով էլ սիրում էր մեռած Յիսուսին: Նա դեռ բան չգիտէ: Մօտենում է գերեզմանին և ի՞նչ է տեսնում. քարը գլորուա՛ծ... Նա մի կողմն է թողնում միւս երեք կանանցը, շտապով քաղաք է վերադառնում, որ էս հրաշալի լուրը առաքեալներին հասցնի: Գալիս են յետոյ միւս կանայքն էլ և քարը գլորուած տեսնելով՝ ներս են մտնում գերեզմանը: Էստեղ մեռած Յիսուսի փոխանակ նրանք տեսնում են հրեշտակին և զարհուրում են: Հրեշտակը ասում է նրանց. «Մի՛ք վախենայ. խաչուած Յիսուսի՞ն էք փնտրում, յարութիւն առաւ, էստեղ չէ. ահա՛ էն տեղը, որտեղ դրել էին նրան»: Նրանք շուտով դուրս են գալիս գերեզմանից և շտապում են դէպի

* Թէպէտ 36 ժամը ոչ թէ 3 օր է, այլ 1.5 օր, բայց աւետարանիների հաշուով 3 է, որից առաջնը համարւում է թաղուելու ուրբաթ երեկոն, երկրորդը՝ շաբաթ օրը, և երրորդը՝ յարութեան կիրակուայ առաւօտը:

Եւսերիսու ու Տերառութիւնոսի պատմելով՝ Յիսուսի յարութիւնից յետոյ Պիղատոսը Տիբերիոս կայսրն մէկ հասկի թուղթ գրեց. «Հրէաների իշխանները, ստախոսութիւն անելով իմ առաջը, հաւատացրին ինձ, թէ նազովրեցի Յիսուսը ծողովրդին ապստամբեցնող ու նրանց օրէնքին հակառակ վարուող մարդ է. ես էլ, հաւատայով նրանց սասաներին, ծեծել տոփի ու յանձնեցի նրանց, որ խաչեն: Եւ նրանք խաչելով նրան՝ սպանեցին, ու թաղուեց գերեզմանում. բայց քանի որ զինուորները պահպանում էին գերեզմանը, նա յարութիւն առաւ գերեզմանից: Եւ էնքան սասակացաւ ու բորբոքեց հրէաների չարութիւնը, որ փող տուին իմ զօրականներին ու սասցին. «Լոյս չըգցէ՛ք, չամէ՛ք էն, ինչ որ տեսաք. այլ ասացէ՛ք, թէ նրա աշակերտները գիշերը գողացան նրան, քանի որ մենք քնած էինք»: Բայց զինուորները, փողն ստանալուց յետոյ, չլուցին, այլ պատմեցին ինձ բոլոր պատահածը. Վկայեցին ինձ, որ ճշմարիտ յարութիւն առաւ. որովհետեւ իրանց աչքովն էին տեսել էն հրեշտակին, որ գլորել էր քարը, և իրանք, ինչպէս մեռած, ընկել էին ինտեղ և յետոյ ուշքի գալով՝ տեսել էին գերեզմանը, որի մէջ չկար նրա մարմինը: Եւ էսքանը էն պատճառով գրեցի քեզ՝ իմ Տիբոջը, որ չընի թէ մէկ ուրիշը ստեր փէքը քեզ մօտ, և հաւատակի համարուի քեզ հրէաների ստութիւնը»:

Մարիամ Մագդաղինացու հեռանալուց յետոյ գալիս են գերեզմանը Պետրոսը ու Յովհաննէս առաքեալները և, լսելով, որ գերեզմանը բաց է, զարհուրում են: Նրանք մտածում են, թէ թշնամիների չարութիւնը էն տեղն է հասել, որ Տիրոջ գերեզմանն ու սուրբ մարմինն էլ չեն խնայել, գերեզմանումն էլ հանգիստ չեն թողել: Խեղճերը դեռ էնքանը պարզ չէին հասկացել, որ Քրիստոս պէտք է յարութիւն առնէր, թէպէտ էդ միտքը քահանաների ու փարիսեցիների աչքից քուներ փախցրել էր: Երբ ներս են մտնում, աչքներն ընկնում է կտաւն ու գլխափաթեթը (վարշամակը), որ ծալած՝ մի կողմն էր դրուած: Նրանց տեսածներից ոչինչ էնպէսի բան չէր երևում, որ գերեզմանը թշնամիներ մտած ըլնեն: Էստեղ մէկ ուրիշ բան պէտք է ըլնէր: Նրանք զարմանում են. Նրանց մտքից մի նոր բան է անց կենում. Նրանք զգում են, Նրանց սիրտը վկայում է, որ Տէրը յարութիւն է առել:

* * *

Պետրոսն ու Յովհաննէսը գնացին: Գալիս է էլի Մարիամ Մագդաղինացին: Նա հոգով, սրտով էնպէս է կպած Յիսուսին, որ ո՛չ կարողանում է մտնել գերեզմանը, ո՛չ հեռանալ նրանից: Դարձն ու սէրը նրան մեխում են տեղնիտեղը: Էդ տեղը նրա համար ամենասիրելի տեղն է. Էդու՛ղ էր թաղուած Յիսուս. Նրա հետ էլ թաղուած էր իր սիրտը: Էստեղ են դեռ էլի նրա պառկած ժամանակուայ նշանները՝ կտաւն ու վարշամակը, ամէն բան իր տեղը: Էս սուրբ տեղին աչքը գցելիս նա միշտ նրան է յիշում, և նրան հիշում է՝ բերանը բաց քարոզելիս, ձեռքը մեկնած բժշկելիս: Ողջ աշխարհումը չկար մէկ էնպէսի տեղ, մէկ էնպէսի անկիւն, որ էնքան սիրելի ըլնէր նրա հոգուն, ինչպէս էս սուրբ գերեզմանը:

Նա կանգնած է գերեզմանի մօտ ու լաց է ըլնում: Նա ունէր

մի Փրկիչ, որ իր բոլոր ուրախութիւնն ու երանութիւնն էր: Նրա մէկ նայելը իր համար արեկի փայլն էր, խօսքը՝ իր սրտի բալասանը, խրատը՝ իր հոգու կերակուրը: Էս տխուր ըոպէին, երբ նրա Տէրը մեռելների աշխարհումն է, կեանքը իր համար դարձել է մի բեռը և աշխարհը՝ իր գերեզմանը:

– ԱՇ կին, – ձայն է տալիս նրան յարութիւն առած Յիսուսը՝ ինչի՞ ես լալիս, ո՞ւմն ես փնտրում:

Նա շուռ է գալիս, տեսնում է Յիսուսին կանգնած, բայց չէ ճանաչում: Նա էդ անծանօթին բաղմանչին է համարում ու ասում:

– Տէ՛ր, եթէ դու ես վեր առել Նրան, ասա՛ տեսնեմ՝ որտե՞ղ ես դրել, որ առնեմ իր տեղը տանեմ:

«Մարիամ», – ասում է նրան Յիսուս: Նա ուրիշ ոչինչ չէ ասում. միայն անունն է տալիս: Բայց ինչպէ՞ս է հանում իր բերանից Նա էդ մէկ խօսքը: Նա էդ մէկ խօսքը շարժեց, տակնուվրայ արեց թշուառ կնոջ սիրտն ու հոգին:

Էդ ծանօթ ձայնը Մարիամի սիրտն է մտնում: Նա շուռ է գալիս, աչքը խօսողի վրայ գցում: «Սա մեռելն է, կենդանացած, – մտածում է նա, – Աստուած իմ, սա նա՛ է. ի՞նչ եմ տեսնում»: Եւ ուրախ սարսուռով նա ընկնում է Նրա ոտքերը, ուզում է փաթթուել ծնկներին և զարմանքով ու հաւատով ձայն է տալիս՝ «Վարդապե՛տ»: Նա գտաւ իր փնտրածը, դեռ նրանից էլ աւելին: Նա փնտրում էր խաչուածին, մեռածին. բայց գտաւ կենդանի, յարութիւն առած: Անասելի ուրախութիւնով նա ընկնում է Նրա ոտքերը: Նա, տեսնելով Յիսուսին փառաւորուած, լուսեղին մարմնով, միտքն է բերում նրա խոստացածը, որ իր յարութիւնից ու համբարձուելուց յետոյ կրկին անգամ գալու է: Նա նրան համբարձուած ու էլի յետ էկած համարելով՝ ընկնում

է ոտքերը։ Եղ պատճառով Յիսուս ասում է նրան. «Մի՛ մօտենար ինձ. որովհետև դեռ չեմ գնացել Հօրս մօտ»։

Սրանով Յիսուս ուզում է հասկացնել նրան և նրանով էլ՝ մեզ,
որ ին փառաւորուած կեանքը, որ նա դուրս է բերել գերեզմանից, չէ շօշափում, չէ բռնւում մահկանացու մարդու ձեռքով։
որ ին կապը, որ կար իր ու Մարիամի՝ իբրև Ուսուցչի ու աշակերտի մէջ, արդէն կտրուած է, որ նա էլ էնպէս չի կարող մնալ Մարիամի մօտ, որ նա կարողանայ իր աչքով տեսնել։ Միայն,
երբ նա երկինք համբարձուի, կը սկսուի մի նոր կապ, * որ էլ ոչ
մի բանով չի կտրուի։ Եւ Մարիամը, նրա հետ էլ ես, դու և
ամբողջ աշխարհը կը մօտենանք Յիսուսին հաւատով, աղօթող
շրթունքներով ու պաղատող ձեռքերով։



* Կապ իբրև Մտեղծողի ու ստեղծուծի մէջ։

ԽՈՐՀՈՒՐԴ Ա. ԽԱԶԻՆ

ԵՐԳԵԿԱԼ
(յանանուն հեղինակէ)

Չորեքկերպեան թևք սուրբ աչին,
Գործ սքանչելեա՛ց ցուցին նոքին.
Նախ թէ չորս կողմ երկրի Փըրկչին,
Ապա յատուկ գործս մին մին։

Գըլուխ Խաչին զերկինս եբաց,
Եւ պատուանդանն զգժոխս աւերեաց.
Զախ թէն ըզգեսըն հալածեաց,
Եւ աջ թէովն ըզմեզ փըրկեաց։

Քառակերպեան աչըն կանգնած,
Չորս թըշնամւոյ զմեզ ազատեաց.
Ի մահուանէ և ի մեղաց,
Ի դըժոխոց, չարչարանաց։

Քառաթէեան աչըն կանգնած,
Ի չորս չարեաց ըզմեզ փըրկեաց.
Ի խաւարէ, յանքուն որդանց,
Յանշէջ հըրոյն, սառնամանեաց։
Քառաթէեան էր ձև աչին,
Չի չորս կողմունք երկրի Փըրկչին,
Չորեքնիւթեայ բնութիւն մարդին,
Եւ որք յօրէնըս չորս անձին

Այլ և չորս ազգ էր փայտ աչին՝
Նոճ, կիպարին, արմաւենին,
Եւ լուսաբերըն ձիթենին,
Յոր զլոյսն Աստուած բևեռեցին։
Այլ և չորս ազգ էր ի աչին,
Փայտ և բևեռքըն որ ընդ Փըրկչին,
Փըշոց պըսակն ընդ գեղարդին,
Որով խոցեաց ըզթըշնամին։

Այլ և էր չորս գուշակ աչին՝
Տապան և ցուպըն Մովսէսին,
Եւ ձողով օձն յանապատին,
Խորովեալ գառն ի սեղանին։

Չորեքկերպեան էր թև աչին,
Եւ չորս զինուորքըն խաչեցին.
Յորս էր խոցուած յոտն և ձեռին
Նստեալն յաթոռ չորեքկերպին։
Փա՛ռք Տէրութեանըն Քրիստոսի,
Եւ օրհնութիւն անլըռելի,
Ընդ Հօր՝ Հոգւոյն Իւր էակցի
Այժմ և յանկէտ յաւիտենի։





ՉԱՐՉԱՐԱՍԹԻ ՇԱԲԱԹ

ՉԱՐՉԱՐԱՍԹԻ ՇԱԲԱԹ

*)

Սրանք երբեմն միասին էին կատարում քահանայապետական պաշտօնք, ինչ-պես Յովհաննես Մկրտչի քարոզութեան առաջին տարումը, և երբեմն՝ առանձին, այսինքն՝ մի տարի մեկը, միւս տարի՝ միւսը: Ես տարին մինչև իրանց Զատկի տօնը քահանայապետը Կայիշափան էր. իսկ հետևեալ ժմրին, Յիսուսի մահից յետոյ, եղաւ Աննան:

Դա էն Յերովդիսն էր, որ, կարծելով, թէ Քրիստոս էլ իր պէս մարմնաւոր կերպով պէտք է թագաւորութիւն ամի, կամեցաւ Նրան սպանել տալ: Եւ դեռ Քրիստոս 15 ամական երեխայ էր, երբ եդ քարասիրտը Բերլեհեմ քաղաքի չորս կողմը գտնուած 84 գիւղից 1462 անմեղ երեխայ կոտորել տուեց իրանց մայրերի գրկում մտածելով, որ կարելի է մանուկ Յիսուսն էլ նրանց մէջը գտնուի ու սպանուի: Եղաւ երեխաների անշուշ մարմինները, ինչ-պես կարկտի ջարդած նիշան ծաղիկներ, ծածկել էին գետինը:

Դրա ոխը սրտումը պահելով, երբ մէկ անգամ մի քանի գալիլիացիներ գնացին Երուսաղէմ և տաճարումը գոհ էին մատուցանում, Պիղատոսը կոտորել տուեց նրանց հենց տաճարի մէջ և նրանց արհւնը խառնեց իրանց գոհերի արեան հետ:

Խաչուածութեան 1997. Հ

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ

ԶԱՐՉԱՐԱՆՔԻ ՇԱԲԱԹ
